Նախագիծ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-703[7]-13.11.2023-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետև՝ օրենք) 12-րդ հոդվածի 6-րդ մասը «վկայական» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության առնվազն մեկ տարվա աշխատանքը հավաստող տեղեկանք՝ տրված մասնագիտական ուսումնական հաստատության կողմից»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը «աշխատանքային ստաժ» բառերից հետո լրացնել «կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում առնվազն մեկ տարվա աշխատանքը հավաստող տեղեկանք տրված մասնագիտական ուսումնական հաստատության կողմից» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~«Առեւտրի եւ~~ «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (~~այսուհետեւ~~այսուհետև՝ օրենք) 12-րդ հոդվածի 6-րդ մասը «վկայական» բառից հետո լրացնել «կամ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության առնվազն մեկ տարվա աշխատանքը հավաստող տեղեկանք՝ տրված մասնագիտական ուսումնական հաստատության կողմից~~»:~~»:

Հոդված 2.~~–~~ Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը «աշխատանքային ստաժ» բառերից հետո լրացնել «կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում առնվազն մեկ տարվա աշխատանքը հավաստող տեղեկանք տրված մասնագիտական ուսումնական հաստատության կողմից» բառերը~~÷~~:

Հոդված 3.~~–~~ Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը~~÷~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ», «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-703-13.11.2023-ԳԿ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ»					
1.	Կառավարություն	Օրենքի նախագիծ	Օրենքի նախագծում շտկվել են տեխնիկական վրիպակները և համարակալումները, դրանք համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Օրենքներում մի շարք խմբագրումները պայմանավորված են նաև տարբեր գերատեսչություններից ստացված, ինչպես նաև քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկություններով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	1-ին հոդված, 1-ին մաս	«այսուհետ» բառից հետո լրացնել «նաև» բառը, քանի որ նախագծում օգտագործվում է «արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում» և «ՄԿՈՒ» ձևակերպումները: Հանել «անձի նախասիրություններին, հնարավորություններին ու աշխատաշուկայի կարիքներին	Ընդունվել է	Ընդունվել է

			և զարգացմանը միտված համապատասխան» բառերը, իսկ գաղափարը տեղափոխել 4-րդ հոդվածի 1-ին մաս: Խմբագրված սահմանվել է 4-րդ հոդվածի առաջին մասում՝ կրկնություններից խուսափելու համար:		
3.	Կառավարություն	2-րդ հոդված 1-ին մաս	«Աշխատանքային օրենսգրքով» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ «Հիմնադրամների մասին» բառերից հետո հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը: Վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերի անվանումները շտկել:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	2-րդ հոդված 1-ին մաս	2-րդ հոդվածում «Աշխատանքային» բառն առաջարկում ենք փոխարինել «աշխատանքային» բառով: Ուղղել ուղղագրական վրիպակը:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Կառավարություն	3-րդ հոդված 1-ին մաս, 1)-ին կետ	1-ին կետում և օրենքի նախագծում «արհեստավորի» բառից հետո լրացնել «(կամ կրտսեր մասնագետ)» բառերը, Առաջարկը նպատակ ունի կարգավորելու նախնական մասնագիտական կրթության առաջին մակարդակի առանձին մասնագիտությունների համար որակավորման անվանման հարցը, որոնք իրենց բնույթով արհեստավոր չեն դիտվում: Օրինակ՝ պարեկը, բուժակը և այլն: Նման լուծումը կարող է նախնական մասնագիտական կրթության մակարդակի որակավորման առավել համահունչ տարբերակ ընտրելու հնարավորություն տալ: Փոփոխությամբ պայմանավորված համապատաս-խան լրացում կատարել նաև՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 17)-րդ կետում, 7-րդ հոդվածի 2-րդ մասին 1)-ին կետում, 8-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետում և 2-րդ մասում, 16-րդ հոդվածի 8-րդ մասի 1)-ին կետում:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			Հաշվի առնելով 3-րդ հոդված 1-ին մաս, 1)-ին կետի սահմանումը՝ միասնականացնել և ամբողջ նախագծում օգտագործել «ՄԿՈՒ համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագիր» նախադասությունը, համապատասխանաբար՝ նաև դրա հոլովաձևերը:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 2)-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 2) մասնագիտական ուսուցում՝ անձի կամ կազմակերպության գնահատված կարիքներին և ձևավորված պատվերին համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ուսումնառություն, որով անձը ձեռք է բերում որոշակի աշխատանքի կամ զբաղմունքի նկարագրով սահմանված գիտելիք, կարողություն և հմտություն (այսուհետ՝ կարողունակություն) կամ ունեցածը հարմարեցնում դրանց. Խմբագրվել է միջազգային սահմանումներին համապատասխանեցնելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 3)-րդ կետ	«հիմնական և լրացուցիչ» բառերը փոխարինել «առնվազն մեկ որակավորման» բառերով, իսկ նախադասության վերջում լրացնել «շնորհում որակավորում» բառերը: Խմբագրվել է հասկացության իմաստը շտկելու համար: ՄՈՒՀ-ի համար հիմնական պայմանը ՄԿՈՒ մակարդակի առնվազն մեկ ծրագիր ու որակավորում կազմակերպելն է: Լրացուցիչ կրթական ծրագիրը պարտադիր պայման չէ, հետևաբար ճիշտ չէ նման պայման սահմանելը:	Ընդունվել է	Ընդունվել է

8.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 5)-րդ և 6)-րդ կետեր	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **5) մասնագիտական կրթության ոլորտային որակավորումների շրջանակ՝** ոլորտային որակավորումների շրջանակի բաղկացուցիչ մաս, որով սահմանում է մասնագիտական կրթության մակարդակի որակավորումների խումբը (ցանկը) և դրա հետ կապված ուսումնառության ընդհանուր վերջնարդյունքները ապահովելու պահանջները (բնութագիր). **6) կրթական ծրագիր՝** ուսումնական և աշխատանքային բաղադրիչների ամբողջություն, որն իրականացվում է ուսումնառության որոշակի վերջնարդյունքներով պայմանավորված հաջորդականությամբ և որով սահմանվում է մասնագիտական կրթության մակարդակը. Խմբագրման անհարժեշտությունը առաջացել է մասնագիտական քննարկումների արդյունքում, որով առավել հստակ է դառնում սահմանումների իմաստը:	Ընդունվել է	Ընդունվել է
9.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 12)-րդ և 13)-րդ կետեր	12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «12) **սոցիալական գործընկերություն՝** ՄՈՒՀ-երի, գործատուների, դրանց միավորումների և ոչ առևտրային այլ կազմակերպությունների, արհեստակցական միությունների, հանրային իշխանության մարմինների միջև աշխատաշուկայի և տնտեսության զարգացման կարիքներին համապատասխան կրթության ապահովմանը միտված համընդհանուր համաձայնեցված կրթական, աշխատանքային, գործընկերային ու սոցիալական համագործակցության ձև.»: 13-րդ կետում «աշխատատեղում» բառը փոխարինել «աշխատավայրում» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է

			Խմբագրվել է միջազգային տերմինաբանությանը համապատասխանեցնելու, իսկ աշխատավայրի իմաստով՝ 2023 թվականին փոփոխված Աշխատանքային օրենսգրքի տերմինաբանությանը համապատասխանեցնելու համար:		
10.	Կառավարություն	3-րդ հոդված 1-ին մաս, 14)-րդ և 15)-րդ կետեր	«մանկավարժական աշխատողների» բառերից հետո լրացնել «դասավանդողի» բառերը, իսկ 15-րդ կետում «ուսումնառող անձի կողմից» բառերը փոխարինել «ուսանողի (ունկնդրի)» բառերով: Լրացումը կատարվել է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԿՈՒ օրենքը կարգավորելու է նաև ուսուցումների դասընթացները: Այդ դեպքում դասավանդողը կարող է լինել որոշակի ոլորտի մասնագետը, որի համար մանկավարժական աշխատողի կարգավիճակը նախապայման չէ: Իսկ փոխարինումը նպատակ ունի համահունչ դարձնել 14-րդ կետի սահմանմանը:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	Կառավարություն	3-րդ հոդված 1-ին մաս, 16)-րդ, 19)-րդ և 20)-րդ, 25)-րդ, 26-րդ, 28)-րդ, 31)-րդ կետեր (հին համարակալումներ)	Հանել ներքոնշյալ հասկացությունների սահմանումները ամբողջությամբ. 16) «ուսումնառության դադարեցում», 19) «դիպլոմ», 20) «որակի ապահովում», 25) «ուսանողական նպաստ», 26) «ուսանողի ուսման վարձի, ներառյալ՝ կրթական ծառայությունների ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կամ ուսանողին հատկացվող ֆինանսավորում» …, 28) «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ»… : 31) «ուսանողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում» …,	Ընդունվել է	Ընդունվել է

			հասկացությունները: Դրանով պայմանավորված հոդվածի կետերի հետընթաց համարակալումը համապատասխանեց-նել: Նշված հասկացությունները օրենքի տեքստում չեն օգտագործվում (օրինակ՝ ուսանողական նպաստ) կամ առավել հասկանալի է համապատասխան հոդվածներում սահմանելու դեպքում:		
12.	Կառավարություն	3-րդ հոդված 1-ին մաս, 21-րդ կետ (նոր 18), ինչպես նաև 13-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 18) **ՄՈՒՀ-ի հավատարմագրում՝** որակի արտաքին գնահատման գործընթաց, որով հավաստվում է ՄՈՒՀ-ի կամ դրա կրթական ծրագրի համապատասխանությունը հավատարմագրման սահմանված չափանիշներին. Խմբագրումը կատարվել է մասնագիտական և պետական մարմինների հետ քննարկման արդյունքներում, որով պարզ է դարձել, որ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմա-գրման կարգավորումները դեռևս հստակեցված չեն. այդ մասով լրացուցիչ քննարկումների անհրաժեշտություն կա: Հետևաբար՝ առավել նպատակահարմար է դեռևս թողներ ներկայիս կարգավորումը: Մոտեցմամբ պայմանավորված՝ նախագծի 13-րդ հոդվածը խմբագրել՝ պահպանելով ներկայումս գործող հավատարմագրման կարգավորումը: Առաջարկը վերաբերելի է նաև «Կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին և 20-րդ հոդվածներին:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	Կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս, 22-րդ կետ (նոր 19)	«կրթական ծրագրով» բառից հետո լրացնել «և որակավորմամբ» բառերը, Լրացման նպատակը մեկ միասնական տերմինի	Ընդունվել է	Ընդունվել է

			օգտագործումն է:		
14.		3-րդ հոդվածի 1-ին մաս, 24-րդ կետ (նոր 21)	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **«21) աշկերտ՝** միաժամանակ ՄՈՒՀ-ում և աշխատավայրում (ուսումնագործնական կենտրոնում) աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն անցնող և գործատուի հետ աշխատանքային հարաբերության մեջ գտնվող ուսանող (ունկնդիր).». Խմբագրվել է միջազգային տեմինաբանությանը համապատասխանեցնելու և կարգավորումը հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
15.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 26-րդ կետ (նոր 22)	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **22) կրթաթոշակ՝** կրթական ծառայությունների և կրթությանը ուսանողի մասնակցությանը օժանդակող ծառայությունների ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կամ ուսանողին հատկացվող այլ ֆինանսավորում՝ պետական բյուջեի միջոցների, ՄՈՒՀ-ի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին կամ միջազգային պայմանագրերի շրջանակում.» Խմբագրվել է՝ հաշվի առնելով մասնագետների և պատասխանատուների հետ քննարկումների արդյունքները, որի ընթացքում նպատակահարմար է դարձել ուսանողական նպաստի, մասնակի կամ լրիվ փոխհատուցում (զեղչ) տրամադրելու և կրթաթոշակի ձևով բյուջետային հատկացումները առավել արդյունավետ եղանակով կիրառելը: Այն է մեկ աղբյուրով լրիվ կամ մասնակի կրթաթոշակի տրամադրումը:	Ընդունվել է	Ընդունվել է

			Հաշվի առնելով վերոգրյալը՝ նույնաբովանդակ փոփոխություններ են կատարվել նաև 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 15-րդ կետերում, **25-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 26-րդ կետերում, 30-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 8-րդ կետերում, 32-րդ հոդվածում և 37-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետում:**		
16.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 31-րդ և 32-րդ կետեր (նոր 24-րդ և 27-րդ)	Լրացնել նոր 24-րդ կետ սահմանելով «խելամիտ հարմարեցում» հասկացությունը, «24) **խելամիտ հարմարեցում՝** ուսանողի (ունկնդրի) և ՄՈՒՀ-ի կողմից փոխհամաձայնեցված փոփոխություններ կամ հարմարեցումներ (այլընտրանքային մատչելի ձևաչափեր, օժանդակ սարքավորումներ և տեխնոլոգիական միջոցներ, լրացուցիչ ժամանակ, անհատականացված աջակցություն և այլն), որոնք բխում են անձի անհատական կարիքներից և նախասիրություններից, չեն խաթարում ՄԿՈՒ ծրագրի ամբողջականությունն ու վերջնարդյունքները, և հնարավորություն են տալիս հաշմանդամություն ունեցող անձին բոլորի հետ հավասար հիմունքներով մասնակցել մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացին և հասնել գնահատելի և չափելի վերջնարդյունքի.» 31-րդ ու 32-րդ կետերը միավորման ձևով խմբագրել «անհատական ուսուցման պլան» հասկացությունը և շարադրել 27-րդ մասով՝ հետևյալ կերպ. «27) **անհատական ուսուցման պլան՝** անհատականացված ճանապարհային քարտեզ, որն ուրվագծում է մասնագիտական կրթություն և ուսուցում ստացող ուսանողի կարիերայի ուղին, գնահատում է ուսանողի կարողունակությունները, սահմանում է	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			կարիերայի նպատակների հասնելու համար անհրաժեշտ կոնկրետ թիրախներ, գործողություններ և ռեսուրսներ, ինչպես նաև օժանդակող կառուցակարգեր (ներառյալ՝ աջակցող ծառայությունները).»: Լրացումը և խմբագրումը կատարվել է հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մասնագիտական կրթության ապահովմանը միտված՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման 4-րդ նպատակի իրականացմանը միտված Կրթություն 2030 INCHEON հռչակագրի և դրա գործողությունների շրջանակի՝ կրթության որակ և հավասար, մատչելի կրթություն բոլորի համար և ոլորտային այլ միջազգային փաստաթղթերի դրույթներին համապատասխանեցնելու համար:		
17.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 33-րդ կետ (նոր 28-րդ)	3-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետում «աշխատակից» բառն առաջարկում ենք փոխարինել «աշխատող» բառով: Համապատասխանեցվել է օրենքի և նշյալ կետի սահմանմանը:	Ընդունվել է	Ընդունվել է
18.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 38-րդ կետ (նոր 33-րդ)	«կարողությունները» բառից առաջ լրացնել «այդ թվում՝ ուսումնամեթոդական» բառերը: Լրացումը կատարվել է մանկավարժական աշխատողների վերապատրաստումներում ուսումնամեթոդական բաղադրիչը պարտադիր ներառելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
19.	Կառավարություն	3-րդ հոդված, 1-ին մաս, 43-րդ կետ (նոր 38-րդ)	«ուսանողների» բառից հետո լրացնել «շրջանավարտների» բառը, իսկ «աշխատողների» բառից հետո «գործատուների (համաձայնությամբ)» բառերը: Վերոնշյալը խմբագրվել է հասկացությունները առավել հստակ սահմանելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է

20.	Կառավարություն	4-րդ հոդվածի 1-ին մաս. Նոր 1-ին մաս.	1-ին մասը խմբագրել նոր հետևյալ բովանդակությամբ. «1. Մասնագիտական կրթությունը և ուսուցումը համակարգված կրթական գործընթաց է, որով անձի մոտ ձևավորում են անհրաժեշտ մասնագիտական կարողունակություններ և աշխատանքային փորձ կուտակելու հնարավորություն՝ որակավորված մասնագիտական գործունեություն իրականացնելու, ներկայի և ապագայի մարտահրավերներին դիմակայելու, փոփոխվող աշխատաշուկային արձագանքելու, նոր պայմաններին հարմարվելու, շարունակական մասնագիտական կատարելագործման ու զարգացման համար:»: Խմբագրման առաջարկը նպատակ ունի առավել ընդգրկուն ներկայացնել մասնագիտական կրթությունը և ուսուցումը՝ պետական քաղաքականության տեսանկյունից:	Ընդունվել է	Ընդունվել է
21.	Կառավարություն	4-րդ հոդվածի 2-րդ մաս	2-րդ մասում՝ «երաշխիք» բառից հետո շարադրել՝ «, իսկ աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը՝ աշխատաշուկայում մրցունակության ապահովման երաշխիք:»: Լրացումով ամրագրվել է օրենքի հիմնական գաղափարական կարգավորման առարկան: 2-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել, գաղափարը խմբագրել և սահմանել որպես քաղաքականության սկզբունք՝ 3-րդ մասի նոր 2-րդ կետում:	Ընդունվել է	Ընդունվել է
22.	Կառավարություն	4-րդ հոդված, 3-րդ և 4-րդ մասեր	Հստակեցվել են մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և անձի կրթության իրավունքի պետական երաշխիքները: ՄԿՈՒ բնագավառի խնդիրները թվարկվել է խմբավորված՝ ըստ առաջնահերթությունների: Ձևակերպումների համար հիմք է ընդունվել ՄԱԿ-ի Կայուն զարգացման 4-րդ և 8-րդ նպատակները և դրանց	Ընդունվել է	Ընդունվել է

			գործողությունների շրջանակը:		
23.	Կառավարություն	4-րդ հոդված, 3-րդ մասում	1. Հանել 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը, 2. 1)-ին կետում մտավոր բառից հետո լրացնել «և գործնական» բառերը, 3. լրացնել նոր 2-րդ կետ և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2) ներառական ու որակյալ մասնագիտական կրթությունն ու ուսուցումը բոլորի համար և հարատև կրթության հնարավորությունների խթանումը.», 4. նախկին 4-րդ նոր՝ 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) ՄՈՒՀ-երի ինքնավարությունը և ակադեմիական ազատությունը», 5. լրացնել նոր՝ 5-րդ կետը հետևյալ բովանդակությամբ. «5) պետություն-մասնավոր հատված համագործակցությունը, պատասխանատվությունը և ձեռք բերված վերջնարդյունքների ճանաչումը.», 6. նոր 8-րդ կետում (հին՝ 12-րդ) «համապատասխանեցումը» բառը փոխարինել «համահնչեցումը» բառով, իսկ «չափանիշներին» բառը՝ «պահանջներին» բառով, Խմբագրումները կատարվել են կրկնություններից խուսափելու և առավել հստակ դրույթներ սահմանելու նպատակով:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
24.	Կառավարություն	4-րդ հոդված 4-րդ մաս	2-րդ մասի խմբագրմամբ պայմանավորված՝ լրացնել նոր 1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «1) ՄԿՈՒ համակարգի բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ պատշաճ ֆինանսավորում.», Հետընթաց համարակալումը 1-ով փոխել.	Ընդունվել է	Ընդունվել է

			3-րդ կետը (նախկին 2-րդ) շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) պետության գնահատված կարիքների և զարգացման առաջընթացի ուղղություններին համապատասխան կամ պետության կողմից գերակա ճանաչված ոլորտներում ՄԿՈՒ ֆինանսավորում.»: 5-րդ կետում «կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման» բառերը փոխարինել «խելամիտ հարմարեցումների» բառերով: Խմբագրումները կատարվել են կրկնություններից խուսափելու, մեկ միասնական տերմինաբանություն կիրառելու և առավել հստակ դրույթներ սահմանելու նպատակով:		
25.	Կառավարություն	5-րդ մաս	Հանել «աշխատանքի վրա հիմնված ուսումնառության, ներառական կրթության և այլ ձևերով» բառերը: Բառերը հանվել է , քանի որ մասում արդեն իսկ ընդհանուր տրված է սահմանում և նպատակահարմար չէ թվարկել և ոչ ամբողջական:	Ընդունվել է	Ընդունվել է
26.	Կառավարություն	5-րդ հոդված	Վերնագիրը և 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **«Հոդված 5.** Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառի խնդիրները 1. ՄԿՈՒ բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝ 1) ապահովել մասնագիտական կրթությամբ անձանց պատրաստումը՝ հաշվի առնելով անձի նախասիրությունները, զարգացման առանձնահատկությունները, պետության և տնտեսության կարիքները, աշխատաշուկայի ժամանակակից	Ընդունվել է	Ընդունվել է

			պահանջները և զարգացման միտումները. 2) վերացնել անհավասարությունները կրթության ոլորտում և ապահովել հավասար հասանելիություն մասնագիտական կրթության և ուսուցման բոլոր մակարդակներում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար. 3) ապահովել մատչելի ու որակյալ մասնագիտական կրթության և ուսուցման հավասար հասանելիությունը կանանց և տղամարդկանց համար. 4) սահմանել աշխատաշուկայի ներկայի և ապագայի կարիքներին միտված որակավորումների ոլորտային շրջանակ՝ առաջնորդվելով պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքով. 5) նպաստել պատշաճ մասնագիտական կարողունակություններ ունեցող անձանց զբաղվածություն ունենալուն, արժանապատիվ աշխատանք գտնելուն և ձեռներեցությամբ զբաղվելուն. 6) նվազեցնել որակավորում (միկրոորակավորում) չունեցող անձանց հարաբերակցությունը. 7) ապահովել հայազգի օտարերկրյա քաղաքացիների (հայկական սփյուռքի համար) մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը. 8) աջակցել պետության գնահատված կարիքների հիման վրա առաջնահերթ համարվող ոլորտներում, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի համար մասնագետների պատրաստմանը և կատարելագործմանը. 9) ապահովել ՄԿՈՒ համակարգի շարունակական զարգացումը, ընդլայնել հարատև կրթության հնարավորությունները. 10)ստեղծել կրթական ծրագրերի մակարդակների,		

			որակավորումների ու տնտեսության համապատասխան բնագավառների միջև համագործակցային արդյունավետ ձևաչափեր՝ համատեղ միջոցառումների, փորձարարական ծրագրերի, ծախսարդյունավետության և փոխադարձ աջակցության համար. 11) ներդնել մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպման, մասնագիտական կրթության վերջնարդյունքների ստուգման արդյունավետ ձևեր. 12) ապահովել սովորողների կարիերայի ուղղորդումը և մասնագիտական կողմնորոշումը՝ նպաստելով որակավորման ընտրության, կարիերայի ուղու և մասնագիտական աճի, զբաղվածության և աշխատաշուկայում մրցունակության հարցերում գիտակցված որոշումների կայացմանը. 13)ներդնել կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ. 14)նպաստել մանկավարժական աշխատողների շարունակական կատարելագործմանը. 15)տրամադրել պետական ֆինանսական օժանդակություն՝ կրթաթոշակի ձևով. 16)կառուցել և վերազինել ՄՈՒՀ-երի շենքային հարմարությունները, որոնցում հաշվի են առնված ուսանողների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատկությունները և ապահովել անվտանգ, բռնությունից զերծ, ներառական և արդյունավետ ուսումնառության միջավայր բոլորի համար . 17) օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրներ:» Հոդվածը ամբողջությամբ խմբագրվել է հիմք ընդունելով ՄԱԿ-ի Հայաստանում կայուն զարգացման 4-րդ և 8-րդ նպատակներին ուղղված աշխատանքների շրջանակը, ինչպես նաև դասավորվել է ըստ		

			առաջնահերթությունների՝ մաքրելով կրկնությունները:		
27.	Կառավարություն	6-րդ հոդված, 2-րդ մասի 3-րդ, 5-րդից 7-րդ կետեր	3)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3) սոցիալական գործընկերության կողմ կազմակերպությունները.». Նպատակը՝ դարձնել համահունչ «սոցիալական գործընկերության» հիմնական փաստաթղթերով սահմանված հիմնական գաղափարի հետ: 5-րդ կետում՝ հանել «ինստիտուցիոնալ և ծրագրային» բառերը. Փոփոխությունը պայմանավորված է 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի սահմանման մեջ փոփոխությամբ: 6-րդ կետում «շրջանակները» բառից հետո լրացնել «և դրանց բնութագրերը» բառերը, Փոփոխությունը պայմանավորված է առավել հստակ սահմանմամբ: 7-րդ կետում՝ հանել «հիմնական և» բառերը: Քանի որ 6-րդ կետում արդեն իսկ սահմանված են հիմնական ծրագրերը:	Ընդունվել է	Ընդունվել է
28.	Կառավարություն	7-րդ հոդված, նոր 3-րդ, 4-րդ և հին 3-րդ (նոր 5-րդ) մասեր	Լրացնել հետևյալ բովանդակությամբ մասեր. «3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով նախատեսված որակավորման անվանումը՝ կախված զբաղմունքի բնույթից, սահմանվում է համապատասխան	Ընդունվել է	Ընդունվել է

			ոլորտային որակավորման շրջանակի բնութագրով:», Սույն 3-րդ մասի ավելացումը պայմանավորված է նախագծում «կրտսեր մասնագետի» որակավորման տարբերակը սահմանելով, դրանով կարգավորելով նախնական մասնագիտական կրթական ծրագրի մակարդակում համապատասխան որակավորումը որոշվելու պայմանները: «4. ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող համապատասխան մակարդակի որակավորման ծրագրի հիման վրա ՄՈՒՀ-ը կարող է մշակել և իրականացնել վերջնարդյունք ապահովող միկրոորակավորման ծրագրեր:», 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. ՄՈՒՀ-ը կարող է մշակել և իրականացնել նաև լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնցով ձեռք բերված ուսումնառության արդյունքները վկայագրվում են և հիմք են միկրոորակավորման համար:»: 4-րդ և 5-րդ կետերի դրույթների խմբագրումը (լրացումը) կատարվել է միջազգային կրթական համակարգում կիրառվող միկրոորակավորումների շնորհման դեպքերը հստակեցնելու միտումով:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

29.	Կառավարություն	7-րդ հոդվածի նախկին 4-րդ մասից 10-րդ մասերը	Նոր համարակալման 6-րդ, 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերը խմբագրել, ինչպես նաև լրացնել նոր 7-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ մասերով և շտկել համարակալումը. «6. ՄՈՒՀ-ը կարող է ըստ որակավորումների իրականացնել նաև փորձարարական կրթական ծրագրեր՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանմամբ: 7. Մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան մակարդակի ոլորտային որակավորումների շրջանակի բնութագրերի հիման վրա կրթության պետական կառավարման լիազոր մարմինը կազմում և հաստատում է տվյալ մակարդակի յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը, որը կարող է վերանայվել սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կրթական ծրագրերի փորձարկման և գնահատման հիման վրա: 8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը ներառում է. 1) որակավորման ուղղվածությունը, զբաղմունքի նկարագիրը, և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները. 2) որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային պահանջները, ներառյալ՝ պետական ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը. 3) ուսանողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը՝ արտահայտված կրեդիտներով և ուսումնառության նվազագույն տևողությունը. 4) ծրագրի բովանդակությունը՝ որակավորումն ապահովող դասընթացների կամ մոդուլների ցանկը և յուրաքանչյուր դասընթացին կամ մոդուլին հատկացվող կրեդիտը.	Ընդունվել է	Ընդունվել է

			5) որակավորման առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան լաբորատորիաների և ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոց) գույքի և սարքավորումների նվազագույն պահանջները և չափաքանակը. 6) շնորհվող որակավորումը և հետագա մասնագիտական գործունեության հնարավոր ոլորտը: 9. ՄՈՒՀ-երը, համապատասխան գործատուների մասնակցությամբ ու նրանց առաջարկությունների, ինչպես նաև սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված փաստաթղթերի հիման վրա մշակում ու հաստատում են համապատասխան մակարդակի որակավորումն ապահովող կրթական ծրագիրը, դրա ուսումնամեթոդական փաթեթը (ուսումնական մոդուլներ, ուսումնական պլաններ, ծրագրի իրականացման ձևը): 10. ՄՈՒՀ-ը կազմում է համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի կազմակերպման նախահաշիվը՝ ըստ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած չափանիշների: 11. Որոշակի որակավորման և ուղղվածության կրթական ծրագիրն առաջին անգամ իրականացվում է սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով որակավորման կրթական ծրագրերի փորձարկման համար սահմանված կարգով: 12. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգով ներդրված որակավորման կրթական ծրագրերը կրթության պետական կառավարման լիազոր մարմինը փորձարկման ընթացքում ենթարկվում է մշտադիտարկման և գնահատման: Փորձարկման առաջին շրջափուլը ավարտած ուսանողին շնորհվում է սույն օրենքի 16-րդ		

			հոդվածով սահմանված որակավորումը հավաստող դիպլոմ և հավելված: 13. Սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով սահմանված կարգով փորձարկումն անցած որակավորման կրթական ծրագրերը այլ ՄՈՒՀ-երի կողմից հետագայում իրականացվում են առանց փորձարկման՝ սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով: 14. ՄՈՒՀ-ի համապատասխան մակարդակի որակավորման ծրագրերը երաշխավորում են մասնագիտական կրթության տարբեր մակարդակներում ուսանողների ուսումնառության գործընթացը՝ ապահովելով կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի կիրարկումը և որակավորման աստիճանների շնորհումը: 15. Միջազգային պայմանագրերի հիման վրա՝ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով առանձին կրթական ծրագրերի և դրանց որակավորումների համար կարող են սահմանվել իրականացման և կառավարման առանձնահատկություններ՝ պահպանելով ոլորտային որակավորումների շրջանակի պահանջները:» Խմբագրվել է կրկնություններից խուսափելու, առավել ամբողջական ձևակերպումներ տալու նպատակով: Ձևակերպումները կատարվել են մասնագետների և միջազգային խորհրդատվության հիման վրա: Հստակեցվել է նաև փորձարարական կարգով ներդրվող ծրագրերի իրականացման պայմանները:		
30.	Կառավարություն	8-րդ հոդված	Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս, «4. Որակավորման ծրագրով սահմանված վերջնարդյունքները ուսանողի կողմից ձեռք բերելու ունակություններով պայմանավորված որակավորումը կարող է ուսանողին շնորհվել սույն հոդվածի 2-րդ կամ	Ընդունվել է	Ընդունվել է

			3-րդ մասերով նախատեսված ժամկետներից շուտ կամ ուշ՝ ուսանողի դիմումով, գործատուի և ՄՈՒՀ-ի համաձայնությամբ, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով:». Լրացումը նպատակ ունի հնարավորություն ընձեռնել շնորհալի և կրթական ծրագրի յուրացումը առավել արագ յուրացնող ու աշխատաշուկայում դրական ընդունված ուսանողներին, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով՝ ավելի կարճ ժամկետներում (էքստեռն) ուսանողներին շնորհել որակավորում: Նման որոշման համար կարևոր նախապայման է նաև գործատուի կարծիքը: Այնուհետև շտկվել համարակալումը’		
31.	Կառավարություն	8-րդ հոդված, 9-րդ և 10-րդ մասեր (նոր 10-րդ և 11-րդ մասեր)	9-րդ և 10-րդ մասերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «10. ՄՈՒՀ-ում դասավանդման լեզուն գրական հայերենն է, անհրաժեշտության դեպքում՝ նաև հայերեն ժեստերի լեզուն: 11. ՄՈՒՀ-ի սահմանած կարգով ուսումնական մոդուլներ, դասընթացներ կամ դրանց առանձին թեմաներ կարող են դասավանդվել օտար լեզվով. 1) եթե կրթական ծրագրի որակավորման ուղղվածությունը ենթադրում է օտար լեզվի ուսուցում. 2) եթե դասընթացն իրականացնում է օտարերկրյա մասնագետը. 3) օտարերկրյա ՄՈՒՀ-ի հետ համատեղ իրականացվող համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի դեպքում. 4) օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվող համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի դեպքում. 5) եթե ապահովվել է թարգմանություն:»:	Ընդունվել է	Ընդունվել է

		11-րդ (նոր՝ 12-րդ մաս)	Առավել հստակ լինելու նպատակով նախկին 9-րդ և 10-րդ մասերը խմբագրվել են, որում հստակեցվել են օտար լեզվով դասավանդման պայմանները: 2. «կազմակերպման» բառից հետո լրացնել «, այդ թվում՝ գործնական աշխատանքային ուսուցման,» բառերը: Լրացումը պայմանավորված է դրույթի առավել հստակ սահմանման անհրաժեշտությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
32.	Կառավարություն	9-րդ հոդված	Հանել 1-ին մասը տեղափոխել 2-րդ մաս և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Պետական ՄՈՒՀ-ը ոչ առևտրային կազմակերպություն է: Պետական չհանդիսացող ՄՈՒՀ-ը կարող է ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:»: Տեղափոխությունը կատարվել է տրամաբանական հերթականությունը պահելու և առավել հստակ կարգավորում տալու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
33.	Կառավարություն	10-րդ հոդված, 1-ին մաս	Խմբագրել և լրացնել 5-րդ, 6-րդ և 15-րդ կետեր և շարադրել հետևյալ կերպ. 1. 4-րդ կետում «կրթության» բառը հանել, «որակավորման» բառից հետո լրացնել «կրթական ծրագրով» բառերը, 2. լրացնել 5)-րդ, 6)-րդ և 15)-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝ «5) ՄԿՈՒ որակի շարունակական բարելավումը, դասավանդման, ուսումնառության արդիական մեթոդների ներդրումը, դրանց բազմազանության և արդյունավետության ապահովումը.	Ընդունվել է	Ընդունվել է

			6) լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումը.», «15) սոցիալական գործընկերության խթանման, կողմերի միջև երկխոսության և համագործակցության հարթակների գործարկումը.»: 3. 11-րդ կետը (նոր 13-րդ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «13) ՄՈՒՀ-ի տարեկան ծախսերի նախահաշվի կազմումը.»: 4. նոր 18-րդ (հին 15-րդ) կետում «ստեղծումը» բառից հետո լրացնել «օրենքով սահմանված կարգով:» բառերը: Խմբագրվել և լրացվել է առավել դասավորված և հստակ կարգավորումներ տալու նպատակով, ինչպես նաև շտկվել է համարակալումը:		
34.	Կառավարություն	11-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ և 3)-րդ կետեր, 4-րդ մաս	2-րդ կետում «օժանդակող» բառից հետո հանել «լսարանային, լաբորատոր,» բառերը և լրացնել՝ «սպորտային տարածքի կամ դրա օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը և գրադարանային...» այնուհետև ինչպես տեքստում: 3-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «3) լսարանային, գործնական ուսուցման գործընթացին օժանդակող ուսումնաարտադրական, լաբորատոր տարածքների և բազաների առկայությունը՝ սանիտարահիգիենիկ և տեխնիկա-կան անվտանգության նորմերին համապատասխան.»: 4-րդ մասում շտկումը տեխնիկական բնույթի է: «3-րդ մասի» բառերից հետո լրացնել «2-րդ և 3-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

			կետերով» բառերը: Խմբագրումը կատարվել է մասնավոր հատվածի ներկայացուցիչների առաջարկով՝ համագործակ-ցության և ներդրումային հավանականությունները մեծացնելու միտումով: Մոտեցումը ներկայում ևս ամրագրված է յուրաքանչյուր կրթական չափորոշչում: Խմբագրմամբ պայմանավորված հանվել է 6-րդ մասի 2-րդ կետը:		
35.	Կառավարություն	11-րդ հոդվածի 6-րդ մաս	2-րդ կետը խմբագրվել է և շարադրվել է հետևյալ նոր բովանդակությամբ. «տվյալ կրթական ծրագրի աստիճանի (մակարդակի) կամ որակավորման ուղղվածությանը համապատասխան լաբորատորիաների և ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոց) գույքի ու սարքավորումների, գրադարանային-տեղեկատվական ֆոնդի առկայությունը կամ դրանց օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը՝ հիմք ընդունելով սույն օրենքի 7-րդ հոդվածի 0-րդ մասի 5-րդ կետի, 0-րդ և 0-րդ մասերով նախատեսված պայմանների ապահովումը.»: Առավել հստակ են ձևակերպվել լիցենզավորման համար անհրաժեշտ պայմանները: 2. Խմբագրվել է 3-րդ կետը և շարադրվել բովանդակությամբ. «3) սույն օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևերի կիրառման դեպքում՝ գործատուի հետ համագործակցության շրջանակը սահմանող փաստաթուղթ (հուշագիր, պայմանագիր) և դրա իրագործումն ապահովող համապատասխան մարդկային ու նյութատեխնիկական ռեսուրսների վերաբերյալ տեղեկություններ.»:	Ընդունվել է	Ընդունվել է

			3. 5-րդ կետը համարակալել 4-րդ և «50» թիվը փոխել «30» տոկոս: Խմբագրումը կատարվել է մասնավոր հատվածի ներկայացուցիչների առաջարկով՝ համագործակ-ցության և ներդրումային հավանականությունները մեծացնելու միտումով:		
36.	Կառավարություն	11-րդ հոդվածի հին 8-րդ մաս (նոր 9-րդ մաս) և հին 9-րդ մաս,	1. 8-րդ մասից հանվել է «Կրթական ծրագրի իրականացման իրավունքը եւ համապատասխան որակավորման լիցենզիան ՄՈՒՀ-ին տրվում են անժամկետ:» նախադասությունը և տեղափոխվել է նոր լրացված 9-րդ մաս՝ հետևյալ խմբագրմամբ. «9. Կրթական ծրագրի իրականացման իրավունքը և համապատասխան որակավորման լիցենզիան ՄՈՒՀ-ին տրվում են անժամկետ:» Լրացումը կատարվել է հաշվի առնելով, որ ՄԿՈՒ կրթական ծրագրերը պարբերաբար կարող են փոփոխվել (օրինակ՝ գործընկերները, մեթոդները), նպատակահարմար է անցկացնել ընթացիկ թարմացումներ: 2. Հանել հին 9-րդ մասը և այն սահմանել ենթաօրենսդրական ակտով:	Ընդունվել է	Ընդունվել է
37.	Կառավարություն	11-րդ հոդված, 13-րդ մաս	13-րդ մասը խմբագրել նոր բովանդակությամբ. «13. Մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի՝ որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացման լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում կրթական ծրագրում ընդգրկված	Ընդունվել է	Ընդունվել է

			ուսանողներն իրավունք ունեն շարունակելու ուսումնառությունը համապատասխան կրթական ոլորտում՝ ընդգրկվելով տվյալ, պետական կամ ոչ պետական հավատարմագրված մեկ այլ ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերում կամ մասնակցելու այդ ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերով պետական ամփոփիչ ստուգմանը՝ լիազոր մարմնի սահմանած կարգով:» Առավել հստակ է ձևակերպվել դրույթը:		
38.	Կառավարություն	11-րդ հոդված, 14 մաս	Սույն հոդվածի «հինգ» բառը փոխարինվել է «10» թվով՝ սահմանելով առավել ողջամիտ ժամկետ:	Ընդունվել է	Ընդունվել է
39.	Կառավարություն	Հոդված 12, վերնագիրը, 1-ին և 2-րդ մասեր	1. Շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 12. Մասնագիտական կրթության որակի գնահատումը** «1. Մասնագիտական կրթության որակի գնահատումը ՄՈՒՀ-ի, դրա կրթական ծրագրերի, ուսանողի կարիերայի հետագծի և հնարավորությունների, մշտադիտարկման, գնահատման և բարելավման շարունակական գործընթաց է, որն իրականացվում է ներքին և արտաքին գնահատման Կառավարության սահմանված չափանիշներին համապատասխան: 2. Մասնագիտական կրթության որակի գնահատման համակարգը ներառում է՝ 1) ներքին գնահատումը. 2) արտաքին գնահատումը. 3) որակի գնահատման կամ հավաստման կառույցները:»: Խմբագրումը կատարվել է տերմինաբանությունը պահպանելու և օրենսդրական տեխնիկայի համապատասխանությունը ապահովելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է

			2. Վերոնշյալ լրացումով պայմանավորված հանել 2-րդ մասը: Հետընթաց համարակալումը դրան համապատասխան փոխել:		
40.	Կառավարություն	Հոդված 12, 3-րդ մաս	ՄՈՒՀ-ի բառից հետո լրացնել «կանոնադրությամբ սահմանված կարգով» բառերը, իսկ «գործընկեր կազմակերպության»-ը՝ «գործատուների»: Խմբագրումը կատարվել է օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու և եզրույթների միասնականությունը պահելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
41.	Կառավարություն	Հոդված 12, 4-րդ և 5-րդ մասեր	1. 4-րդ մասում «Արտաքին գնահատումը» բառերից հետո լրացնել «պետության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան» բառերը: 2. 5-րդ մասից հանել «արտաքին» բառը, իսկ «ապահովման» բառը փոխարինել «գնահատման» բառով: Խմբագրումը կատարվել է որակի գնահատման գործընթացը հստակեցնելու և տերմինաբանությունը միասնականացնելու միտումով:	Ընդունվել է	Ընդունվել է
42.	Կառավարություն	13-րդ հոդվածի 1-ինից 8-րդ մասեր	1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. ՄՈՒՀ-ի հավատարմագրումն իրականացնում են որակի գնահատման կամ հավաստման կառույցները (այսուհետ՝ մասնագիտացված կառույց)՝ օրենքով սահմանված կարգով: ՄԿՈՒԽ-ի հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի	Ընդունվել է	Ընդունվել է

			ներկայացմամբ:» 2. 2-րդից 7-րդ մասերը հանել: 3. 8-րդ մասը համարել 2-րդ մաս: Խմբագրումը կատարվել է մասնագիտական և պետական մարմինների հետ քննարկման արդյունքներում, որով պարզ է դարձել, որ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմա-գրման կարգավորումները դեռևս հստակեցված չեն. այդ մասով լրացուցիչ քննարկումների անհրաժեշտություն կա: Հետևաբար՝ առավել նպատակահարմար է դեռևս թողներ ներկայիս կարգավորումներին և ենթաօրենսդրական ակտերով: Տե՛ս նաև 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի մեկնաբանությունը:		
43.	Կառավարություն	14-րդ հոդված 3-րդ մաս	2-րդ նախադասության «պետական» բառից հետո լրացնել «բյուջեից տրվող» բառերը, իսկ «քսան տոկոսով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ ոլորտային պետական ռազմավարական ծրագրերում գերակայությունների էական փոփոխության դեպքի:» բառերը: Դրույթը նախատեսված էր կրթության, շուկայի կանխատեսումների և դիմորդի շահերի պաշտպանության միտումով: Լրացումը կատարվել է էական ռազմավարական փոփոխությունների պարագայում, նախնական պլանավորումից 20% շեղվելու հնարավորությունով չկաշկանդվելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
44.	Կառավարություն	14-րդ հոդված, 7-րդ և 9-րդ մասեր	1. 7-րդ և 9-րդ մասերում «արվեստի,» բառը հանել, 2. 9-րդ մասում «(քննություն) բառից հետո լրացնել «, իսկ բժշկության ոլորտի առարկայական քննության դեպքում՝ հանրակրթական համապատասխան առարկայի (բնագավառի) ծրագրի գիտելիքների և	Ընդունվել է	Ընդունվել է

			կարողունակությունների ստուգում:» բառերը: Մշակույթը նաև իր մեջ ներառում է արվեստը: Փոփոխությամբ լրացվել է հանրակրթական առարկայի քննության դեպքը, քանի որ բժշկության ոլորտի մասնագիտությունների գծով ընդունելության ժամանակ հանձնում են քննություն՝ հանրակրթական առարկա ծրագրով:		
45.	Կառավարություն	14-րդ հոդվածի 10-րդ մասում	«տվյալ» բառը փոխարինել «համապատասխան մակարդակի» բառով: Ձևակերպումը հստակեցվել է:	Ընդունվել է	Ընդունվել է
46.	Կառավարություն	14-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասեր	«ուսանողի» բառից հետո լրացնել «(նրա օրինական ներկայացուցչի)» բառերը. Հստակեցվել է իրավական շրջանակը:	Ընդունվել է	Ընդունվել է
47.	Կառավարություն	15-րդ մասի նոր՝ 3-րդ կետ	Լրացնել նոր 3-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ՝ «3) սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված պահանջների ապահովումը:»: Լրացումը պայմանավորված է բոլոր պահանջների ապահովման անհրաժեշտությամբ: Նպատակ ունենալով յուրաքանչյուր մասնագիտության մուտքային պահանջները միասնական դարձնել:	Ընդունվել է	Ընդունվել է
48.	Կառավարություն	15-րդ հոդվածի 2-րդ մաս	« Քրեակատարողական օրենսգրքի» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
49.	Կառավարություն	15-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մաս	1.«գործատուների հետ» բառերը փոխարինել «սոցիալական գործընկերների հետ» բառերով, 2. «կրթական ծրագրի տվյալ մակարդակի որակավորման» բառերը փոխարինել «համապատասխան մակարդակի կրթական ծրագրով»	Ընդունվել է	Ընդունվել է

			բառերով: Փոփոխության նպատակները արդեն իսկ տրվել են նախորդ հիմնավորումներով:		
50.	Կառավարություն	15-րդ հոդվածի 8-րդ մաս	1. « Վերջին «աշխատանքային ուսուցում՝» բառերից հետո խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. «սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված ձևերով և լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված ձևերը կարող են կիրառվել լրացուցիչ կրթական ծրագրերի համար:»: Հստակեցվել է ուսուցման ձևերի կիրառման շրջանակը:	Ընդունվել է	Ընդունվել է
51.	Կառավարություն	15-րդ հոդված, 9-րդ մաս, 1-ին կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1) դուալ ուսումնառություն՝ կրթական ծրագրի մակարդակում ըստ որակավորման առանձնահատկության ուսումնառության կազմակերպման ձև, որն իրականացվում է միաժամանակ ՄՈՒՀ-ում և գործատուի մոտ (այդ թվում՝ ուսումնագործնական կենտրոններում) կամ իրական աշխատավայրին համապատասխանեցված աշխատանքային միջավայրում ուսումնառության համադրմամբ՝ ապահովելով որակավորմանն ու զբաղմունքին համապատասխան աշխատանքային կարողունակությունների ձեռք բերումը.»: Խմբագրման նպատակը ողջ տեքստում միասնական սահմանման տրամաբանության ապահովումն է:	Ընդունվել է	Ընդունվել է
52.	Կառավարություն	15-րդ հոդված, 10-րդ մաս	«ուսուցման ձևով» բառերը հանել, իսկ «գործնական միջավայրում» բառերից հետո լրացնել «՝ գործատուների ներգրավմամբ:». Խմբագրման նպատակը ողջ տեքստում միասնական	Ընդունվել է	Ընդունվել է

			սահմանման տրամաբանության ապահովումն է:		
53.	Կառավարություն	15-րդ հոդված, 11-րդից մինչև 15-րդ մասերը	11-15-րդ մասերը շարադրել նոր 11-րդից 17-րդ մասերի հետևյալ բովանդակությամբ. «11. Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ձևերով գործնական աշխատանքային ուսուցումը կազմակերպվում է գործնական աշխատանքային ուսուցման ծրագրի հիման վրա: Սույն հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում, եթե առկա է գործնական աշխատանքային ուսուցման ծրագրի և ուսանողի ընթացիկ աշխատանքային գործառույթների միջև ծրագրային տարբերություն, ապա գործնական աշխատանքային ուսուցման ծրագրով լրացվում է միայն այդ տարբերությունը: 12. Սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված ձևերով ուսումնառությունը կազմակերպվում է ՄՈՒՀ-ի և գործատու միջև կնքված աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման վերաբերյալ համագործակցության շրջանակը սահմանող պայմանագրի հիման վրա: 13. Սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով նախատեսված ձևով ուսումնառության կազմակերպման դեպքում գործատուի և ուսանողի (աշկերտի) միջև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով կնքվում է աշխատանքային պայմանագիր (աշկերտության պայմանագիր), որում սահմանվում են նաև. 1) կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորումը և գործնական աշխատանքային ուսուցման նպատակը, 2) գործնական աշխատանքային ուսուցման կազմակերպման վայրը, 3) կողմերի իրավունքներն ու	Ընդունվել է	Ընդունվել է

			պարտականությունները, 4) աշխատանքի ծավալը, աշխատանքը սկսելու և ավարտելու ժամկետները և տևողությունը, 5) անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցերը: 14. Եթե կրթական ծրագրի որակավորման համապատասխան բնագավառում աշխատանքը օրենսդրությամբ սահմանված է որպես ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար, կամ մինչև տասնութ տարեկան անձանց համար ծանր և վնասակար համարվող, ապա մինչև տասնութ տարեկան աշկերտը կարող է ներգրավվել գործնական աշխատանքային ուսուցման մեջ, եթե ապահովված են անչափահասի առողջության, անվտանգության և բարոյականության պահպանման համապատասխան պայմաններ և անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև գործատուի կողմից նախապես տրամադրվել են հնարավոր ռիսկերի, անվտանգ աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկություններ, անց է կացվել ուսուցում և հրահանգավորում: Աշխատանքը պետք է իրականացվի ոլորտում մասնագիտական բավարար գիտելիքներ և փորձ ունեցող չափահաս անձի (մասնագիտական ուսուցման հրահանգչի) հսկողության ներքո: Սույն մասով նախատեսված ոլորտներում, մինչև գործնական աշխատանքային ուսուցման կազմակերպումը ուսանողը անցնում է բժշկական զննություն՝ ուսումնական հաստատության միջոցների հաշվին, եթե այլ բան նախատեսված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով: 15. Դուալ ձևով ուսումնառող աշկերտին գործատուի կողմից (այդ թվում՝ ՄՈՒՀ-ի, եթե գործատուն ՄՈՒՀ-ն է) տրվում է վարձատրություն փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան, իսկ այդ ժամանակահատվածը համարվում է մասնագիտական փորձառություն և հաշվարկվում աշխատանքային ստաժում: Դուալ ուսումնառության ընթացքում աշխատանքային		

			հարաբերությունների նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթները: 16. ՄՈՒՀ-ը կրում է մասնագիտական կրթական ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող ուսանողի՝ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության պարտավորություն, եթե այլ բան նախատեսված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով: 17. Մասնագիտական կրթական ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող ուսանողի օրապահիկը, տեղափոխման և կեցության հետ կապված ծախսերը հատուցում է ՄՈՒՀ-ը, եթե այլ բան նախատեսված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով: Հատուցման ենթակա ծախսերը և չափը սահմանում է Կառավարությունը:»: Այս կարգավորման նպատակն է աշխատանքային իրավահարաբերություններում առանձնակի կարգավորում սահմանել աշկերտության շրջանակում աշխատող ուսանողի համար: Հոդվածում նման լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է մասնագիտական կրթություն ստացող, սակայն երեխայի համար վնասակար համարվող մասնագիտություններում սովորողների ներ-գրավվածությունը ապահովելու, երիտասարդ կադրերի մուտքը աշխատաշուկա ապահովելու, և միաժամանակ՝ անվտանգ աշխատանքային միջավայր պարտադրելու միջազգային կարգավորումները տեղայնացնելով:		

54.	Կառավարություն	15-րդ հոդված, 16-րդ մաս (նոր 18-րդ մաս) 17-րդ մաս (նոր՝ 19) 18-րդ մաս, (նոր՝ 20-րդ մաս	«ուսանողի» բառը փոխարինել «աշկերտի» բառով և տեղափոխել «տրամադրվում է» բառից հետո: Հղումները շտկել. «9-րդ և 10-րդ» բառրը փոխարինել «5-րդ և 6-րդ» բառերով, «7-րդ հոդվածի 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով»: Խմբագրումը կատարվել է օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու և եզրույթների միասնականությունը պահելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
55.	Կառավարություն	16-րդ հոդված, 1-ին և 2-րդ մասեր	Կատարել կրթության կազմակերպման և որակավորման շնորհման հետ կապված տերմինաբանության խմբագրումներ: 1-ին մասը խմբագրել նոր բովանդակությամբ. «1. Մասնագիտական կրթության համապատասխան մակարդակի կրթական ծրագրի ավարտին՝ պետական ամփոփիչ ստուգման դրական արդյունքի հիման վրա, ՄՈՒՀ-ն ուսանողին շնորհում է որակավորումը և կրթական աստիճանը հավաստող պաշտոնական փաստաթուղթ՝ դիպլոմ և հավելված:»: 2-րդ մասում «խնդիրներ» բառից հետո լրացնել «լուծելու» բառը, իսկ «առաջադրանքներ» բառից հետո «լուծելու» բառը փոխել «կատարելու» բառով: Խմբագրումը կատարվել է օրենսդրական տեխնիկայի կանոնները պահպանելու և եզրույթների միասնականությունը պահելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
56.	Կառավարություն	16-րդ հոդված, 5-րդ մաս	Լրացնել նոր 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «5. Պետական ամփոփիչ ստուգումն իրականացնում է պետական որակավորող հանձնաժողովը: Պետական ամփոփիչ ստուգումն իրականացնող հանձնաժողովի կազմի առնվազն 1/3-ը սոցիալական գործընկերության կողմ կազմակերպությունների ներկայացուցիչներից են:»: Լրացման նպատակն է օրենքով սահմանել	Ընդունվել է	Ընդունվել է

			հանձնաժողովի, մասնավորապես սոցիալական գործընկերների ընդգրկվածությանը չափը:		
57.	Կառավարություն	16-րդ հոդված, 6-րդ մաս (նոր 7-րդ)	Հին 6-րդ մասը խմբագրվել է և շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «7. Կրթական ծրագրի համապատասխան մակարդակի որակավորման ուսումնառությունը աշխատանքի վրա հիմնված դուալ ուսումնառության ձևով ավարտած ուսանողին շնորհվում է նաև ձեռք բերված և ոլորտային հանձնաժողովի կողմից գնահատված ու ճանաչված աշխատանքային կարողունակությունների վերաբերյալ հավաստագիր և ներդիր՝ «Կրթության մասին» օրենքի 26.1-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերին համապատասխան:» Խմբագրվել է հստակեցման նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
58.	Կառավարություն	16-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ (նոր 11-րդ և 13-րդ) մասեր	Հղումները շտկել «8-րդ» թվերը փոխարինել «9-րդ» թվերով, իսկ «9-րդ» թիվը փոխարինել «10-րդ» թվով: Հղումների շտկում:	Ընդունվել է	Ընդունվել է
59.	Կառավարություն	17-րդ հոդված, 1-ին մասի 3-րդ, 4-րդ և 6-րդ (նոր 5) կետերում	1. 3-րդ և 4-րդ կետերը միավորելով խմբագրել նոր հետևյալ բովանդակությամբ. «3) պետական կառավարման համակարգի այլ լիազոր մարմինները, այդ թվում՝ տարածքային կառավարման մարմինները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները.» բառերը, իսկ 4-րդ կետը հանել: Փոփոխությունը նպատակ ունի ակտիվացներ տարածքային ինքնակառավարման մարմինների ընդգրկվածությունը ՄԿՈՒ համակարգում: 2. 6-րդ կետում «3-րդ և» բառերից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ՝	Ընդունվել է	Ընդունվել է

			«5-րդ մասերով նախատեսված ոլորտային կառույցները:»:		
60.	Կառավարություն	18-րդ հոդված, 1-ին մաս	1. 1-ին կետը շարադրել հատկյալ խմբագրությամբ. «1) հիմնադրում, վերակազմակերպում և լուծարում է պետական ՄՈՒՀ-եր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով որոշում է պետության մասնակցությամբ հանրային ՄՈՒՀ-ի ստեղծման, վերակազմակերպման, մասնակցությունից դուրս գալու և գործունեության դադարեցման հարցերի վերաբերյալ.», 2. Հանել 3-րդ, 5-րդ, 10-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ կետերը: Նման անհրաժեշտությունը առաջացել է լիազորությունների վերաբաշխման, կարգավորումների վերաձևակերպման արդյունքում: 3. լրացնել խմբագրված և նոր համարակալված հետևյալ կետերը. «7) հաստատում է ՄՈՒՀ-ի ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման կարգը և չափը, 8) հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի պետական բյուջեից ֆինանսավորման կարգը, գործակիցները և նորմատիվները, այդ թվում՝ ըստ ՄՈՒՀ-ի ֆինանսավորման արդյունքային ցուցանիշների. 9) սահմանում է պետության կողմից լրիվ կամ մասնակի կրթաթոշակ տրամադրելու կարգը, այդ թվում՝	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			չափանիշները, հիմքերը, դեպքերը և կրթաթոշակի չափերը 10) հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի յուրաքանչյուր ուսումնական տարվա կրթաթոշակով (լրիվ կամ մասնակի) ընդունելության տեղերի ձևավորման և ըստ ՄՈՒՀ-երի հատկացնելու կարգը, 11) հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի յուրաքանչյուր ուսումնական տարվա լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով ընդունելության տեղերը՝ ըստ որակավորումների (ուղղվածության), 12) հաստատում է պետական և հանրային ՄՈՒՀ-երի նպատակային ուսուցման, այդ թվում՝ պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող որակավորումներով կամ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների ընդունելության ու գործուղման կարգը:»:		
61.	Կառավարություն	19-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին, 12-րդ և 23-րդ կետեր	1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը միավորվելով խմբագրվել և շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «1) հաստատում է ոլորտային որակավորման շրջանակի մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիրը.»: 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերը միավորվելով խմբագրվել և շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «11) սահմանում է համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի կազմակերպման նախահաշվի կազմման չափանիշները.»: 1-ին մասի 22-րդ և 23-րդ կետերը միավորվելով	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			խմբագրվել և շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. «21) սահմանում է մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման կարգը, տարակարգի շնորհման հանձնաժողովի ձևավորման, դրա գործունեության և տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, տարակարգի բնութագրիչները.»: Նշված կետերի միավորման ձևով խմբագրման անհրաժեշտությունը առաջացել է լիազորությունների վերաբաշխման, կարգավորումների վերաձևակերպման արդյունքում: 2. Լրացնել խմբագրված և նոր լրացված ու համարակալված հետևյալ կետերը. «4) հաստատում է, փորձարկվող կրթական ծրագրերի երաշխավորման պայմանները, նախագծերի փորձարկման, հաստատման, ինչպես նաև վաղաժամկետ դադարեցման հիմքերն ու կարգը.» «19) հաստատում է ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողների վերապատրաստումների կարգն ու ժամանակացույցը, ծրագրային ուղղությունները. 20) սահմանում է ՄՈՒՀ-երի մանկավարժական աշխատողների ատեստավորման, ատեստավորման հանձնաժողովների ձևավորման և դրանց գործունեության կարգը,», «22) սահմանում է պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման, վերահանձման, պետական	Ընդունվել է	Ընդունվել է
		19-րդ հոդված, 1-ին մաս, 5-րդ (նոր՝ 4-րդ լրացված), 20-րդ (նոր 19-րդ խմբագրված), 21-րդ (նոր 20-րդ խմբագրված), 24-րդ (նոր 22-րդ խմբագրված), 29-րդ (նոր 27-րդ խմբագրված), 30-րդ (նոր 28-րդ խմբագրված) 31-րդ (հանված)		Ընդունվել է	Ընդունվել է

		և 34-րդ (նոր 31-րդ լրացված) մասեր	որակավորող հանձնաժողովի ձևավորման, ինչպես նաև սահմանված ժամկետից շուտ կամ ուշ որակավորում շնորհելու կարգը.», «27) սահմանում է ՄՈՒՀ-երի «Տարվա լավագույններ» մրցույթի անվանակարգերը, ներկայացվող պահանջները և անցկացման կարգերը, խրախուսման եղանակները. 28) սահմանում է ՄՈՒՀ-երի «Լավագույն ուսանողներ» մրցույթի չափանիշները, անվանական կրթաթոշակների չափը և մրցույթի անցկացման կարգը.» «31) սահմանում է պետական ՄՈՒՀ-ի ուսանողներին և մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը.»: Լրացումները կատարվել են օրենքից բխող գործընթացները կանոնակարգող լիազորող նորմեր սահմանելու անհրաժեշտությունով պայմանավորված:		
62.	Կառավարություն	20-րդ հոդված, վերնագիր 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը	Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 1. «Հոդված 20. Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական կառավարման համակարգի այլ լիազոր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական գործընկերների իրավասությունները»: 2. 1-ին մասում «այլ» բառից հետո լրացնել «լիազոր» բառը. 3. լրացնել նոր 1-ին կետ, հին 1-ինը համարել 2-րդ և խմբագրել: 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «1) իրենց իրավասության բնագավառներում	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			մասնագիտական կարողունակությունների կարիքի գնահատում և վեր հանում, որոնք անհրաժեշտ են սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքների վրա հիմնված հասարակության մեջ անձի ինքնուրույն գործունեության համար. 2) մասնագիտական կրթության մասով՝ ոլորտային որակավորումների շրջանակի, որակավորումների ցանկերի և բնութագրերի, որակավորման շրջանակային նկարագրի, ուսանողների գիտելիքների, կարողունակությունների նկատմամբ պահանջների ձևավորում:», 4. Համարակալել որպես նոր 4-րդ և 5-րդ կետեր և. 4-րդ կետում՝ «աշխատողներ» բառից առաջ լրացնել «մանկավարժական» բառը, իսկ 5-րդ կետում՝ «աջակցությունը» բառը փոխարինել «կազմակերպմանը աջակցություն» բառերով: Առավել հստակեցվել են այլ կառույցների դերակատարումները և առավել հստակ են ձևակերպվել:	Ընդունվել է	Ընդունվել է
63.	Կառավարություն	20-րդ հոդված 2-րդ մաս (նոր լրացվող)	Լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ 2-րդ մաս. «2.Տեղական ինքնակառավարման Մարմինները ՄԿՈՒ բնագավառում մասնակցում են սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև աջակցում են համայնքում սոցիալական գործընկերության համակարգի գործառնությանը:»: Առավել հստակեցվել են այլ կառույցների դերակատարումները	Ընդունվել է	Ընդունվել է

64.	Կառավարություն	20-րդ հոդված 2-րդ և 3-րդ մասերը (նոր 3-րդ և 4-րդ)	2-րդ մաս խմբագրել նոր հետևյալ բովանդակությամբ. «3. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով նախատեսված դուալ ուսումնառության համակարգումն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազոր մարմինը կամ նրա պատվիրակմամբ՝ ընտրված կազմակերպությունը (այսուհետ՝ դուալ ուսումնառությունը համակարգող պատասխանատու մարմին)՝ մի կողմից և ըստ ոլորտների մասնավոր հատվածի շահերը ներկայացնող ոչ առևտրային կազմակերպությունները (այսուհետ՝ ոլորտային կառույց)՝ մյուս կողմից: Դուալ ուսումնառությունը համակարգող պատասխանատու մարմնի ձևավորման և գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը»: 3-րդ (նոր 4-րդ) մասում «ուսուցման համակարգման» բառերը փոխարինել «ուսումնառությունը համակարգող» բառերով, իսկ նույն մասի 4-րդ կետում «գործընկեր» բառը փոխարինել «գործընկերության կողմ» : Համապատասխանեցվել է օրենքի 15-րդ հոդվածի ձևակերպումներին:	Ընդունվել է	Ընդունվել է
65.	Կառավարություն	20-րդ հոդված 4-րդ (նոր 5-րդ), 6-րդ (նոր 7-րդ) մասեր	4-րդ մասը խմբագրել նոր բովանդակությամբ. 1. «5. Դուալ ուսումնառությունը համակարգելու շրջանակներում ոլորտային կառույցը. 1) վերլուծում և դուալ ուսումնառությունը համակարգող պատասխանատու մարմնին է ներկայացնում ոլորտի աշխատաշուկայի կարիքները. 2) աջակցում է պետություն-մասնավոր հատվածի համագործակցությանը և երկխոսությանը.	Ընդունվել է	Ընդունվել է

			3) խորհրդատվություն է տրամադրում դուալ ուսումնառության ձևով համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի մշակմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը. 4) աջակցում է դուալ ուսումնառության ձևով համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի իրականացման ընթացքում ծագած վեճերի լուծմանը, կողմերի շահերի ներդաշնակեցմանը. 5) համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի իրականացնող կողմ հանդես գալու համար ընտրում և առաջակում է գործատուների. 6) խթանում է ՄԿՈՒ ոլորտի գրավչության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը երիտասարդության շրջանում, կազմակերպում և իրականացնում է մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ. 7) կազմակերպում և իրականացնում է դուալ ուսումնառության ձևով համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների ստուգումը և ճանաչումը՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի, ՄՈՒՀ-ի և գործատուների ներգրավմամբ:»: 2. 7-րդ մասում «նյութերը» բառից հետո լրացնել «, ապահովում անհրաժեշտ խորհրդատվություն» բառերը: Վերոնշյալ խմբագրումները կատարվել են դուալ ուսուցման շրջանակներում բոլոր կողմերի իրավասությունները հստակեցնելու նպատակով:		
66.	Կառավարություն	21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	1-իդն մասում «կառավարման խորհուրդ» բառերից հետով լրացնել «կամ» բառը	Ընդունվել է	Ընդունվել է

			2-րդ մասը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. 2. Միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված պետական ՄՈՒՀ-ի, հանրային, մասնավոր ՄՈՒՀ-երի, ինչպես նաև կազմակերպության ստորաբաժանում համարվող ՄՈՒՀ-երի կառավարման և այլ մարմինները, դրանց ձևավորման և գործունեության կարգը, լիազորությունները սահմանվում են համապատասխան կազմակերպաիրավական ձևը կարգավորող օրենքներով, ՄՈՒՀ-ի և հիմնադիր կազմակերպության կանոնադրությամբ և հիմնադիր պայմանագրերով:»: Առաջին մասի փոփոխության նպատակը հստակեցնել ձևակերպումները, իսկ 2-րդ մասում ավելացվել է Միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված պետական ՄՈՒՀ-ը, քանի որ օտարերկրյա ՄՈՒՀ-ը կարող են ստեղծվել նաև միջազգային պայմանագրի հիման վրա:		
67.	Կառավարություն	21-րդ հոդվածի 4-րդ մասում	Հանել «Արվեստի (երաժշտարվեստ, պարարվեստ, գեղարվեստ) բառերը: Մասը սկսել՝ «Մշակույթի և սպորտի ոլորտի որակավորման կրթական ծրագիր իրականացնող ՄՈՒՀ-երում» այնուհետև ինչպես տեքստում: Մշակույթ հասկացությունը իր մեջ պարունակում է հանված բոլոր բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
68.	Կառավարություն	22-րդ հոդված, 1-ին մաս	Հանել «, եթե սույն օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված հիմքերով տվյալ անդամի լիազորությունները ավելի վաղ չեն դադարել կամ դադարեցվել» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է

			Խմբագրվել է կրկնվող ձևակերպումներից խուսափելու համար:		
69.	Կառավարություն	22-րդ հոդված, 2-րդ և 7-րդ մասեր	Հանել 2-րդ մասը, բովանդակությունը տեղափոխել նույն հոդվածի 7-րդ մաս:	Ընդունվել է	Ընդունվել է
70.	Կառավարություն	22-րդ հոդված, մաս 4-րդ և 2-րդ	4-րդ մաս հանել, տեղափոխել որպես 2-րդ մաս	Ընդունվել է	Ընդունվել է
71.	Կառավարություն	22-րդ հոդված, 5-րդ մասի (նոր՝ 4-րդ մաս), 2-րդ կետ	4-րդ և 5-րդ մասերը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «4. Պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ.»: 5-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2) երկուսին առաջադրում են ՄՈՒՀ-ի որակավորումների (ուղղվածության) ոլորտներում մասնավոր հատվածի շահերը ներկայացնող կազմակերպությունները՝ ՄՈՒՀ-ի հետ տվյալ ոլորտում առավել ակտիվ համագործակցող կամ կրթական ծրագիր իրականացնող գործատուներից,»:	Ընդունվել է	Ընդունվել է
72.	Կառավարություն	22-րդ հոդված 5-րդ մաս	Լրացնել նոր 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ «5. Սույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով նախատեսված ուսանողության ներկայացուցիչը սույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից առաջնորդվում և խորհրդում ներկայացնում է ուսանողական համայնքի շահերը:» Խմբագրումը կատարվել է ուսանողության	Ընդունվել է	Ընդունվել է

			ներկայացուցիչները խորհրդում ընդգրկվածության մեխանիզմը հստակեցնելու համար:		
73.	Կառավարություն	22-րդ հոդվածի նոր 6-րդ մաս, 7- րդ մաս, 8-րդ մասի 4-րդ կետ, 9-րդ մաս	«պետության համար» բառերից հետո հանել «գերակա» բառը, իսկ «ունեցող այլ» բառերից հետո հանել «բնագավառներում» բառը, փոխարենը լրացնել «գերակա ոլորտներում» բառերը՝ ճիշտ ձևակերպումն ապահովելու համար: Լրացնել նոր 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Պետական ՄՈՒՀ-ի խորհրդի անդամները գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով: Խորհրդի անդամները ՄՈՒՀ-ի միջոցների հաշվին կարող են ստանալ խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերի փոխհատուցում: Հատուցվող ծախսերի չափը և փոխհատուցման կարգը սահմանում է խորհուրդը:» Լրացումը սահմանվել է որպես խրախուսման կամ որոշ դեպքերում խորհրդի անդամների ծախսերի փոխհատուցման հնարավորության նպատակով: 8-րդ մասի 4-րդ կետում «որևէ» բառից հետո լրացնել «քաղաքական» բառը: 9-րդ մասում «նշանակվել է» բառից առաջ լրացնել «առաջադրվել և» բառերը Լրացումը կատարվել է ձևակերպման հստակեցման նպատակով, ինչպես նաև ուս. հաստատությունների խորհուրդներում քաղաքական ազդեցությունը բացառելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
74.	Կառավարություն	25-րդ հոդված, 1-ին մաս	Համապատասխանեցնել ձևակերպումները նախագծում կատարված փոփոխություններին և տերմինաբանությանը: 1. 4-րդ կետը Խմբագրել և շարադրել հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			բովանդակությամբ. «4) որոշում է կայացնում տնօրենի լիազորությունների դադարեցման հարցով լիազոր մարմնին դիմելու մասին՝ սույն օրենքի 29-րդ հոդվածի **Ошибка! Источник ссылки не найден.**-րդ մասով նախատեսված դեպքերում և կարգով.», 6-րդ կետում 2. համարակալել նոր 2-րդ կետ, «տարեկան ծրագիրը» բառերից հետո լրացնել «և ժամանակացույցը.», 3. նոր համարակալմամբ 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «7) տնօրենի ներկայացմամբ հաստատում է ՄՈՒՀ-ի տարեկան ծախսերի նախահաշիվը կամ դրանում փոփոխությունները՝ կրթության լիազոր մարմնին ներկայացնելու համար.» 4. 6-րդ կետը հանել «ՄՈՒՀ-ի տարեկան բյուջեն ու դրանցում փոփոխությունները» բառերը փոխարինել «և ժամանակացույցը» բառերով, իսկ 7-րդ կետում «նախահաշիվը» բառից հետո լրացնել «կամ դրանում փոփոխությունները» բառերը: 5. 11-րդ կետից հանել «համաձայն հիմնադրի սահմանած կարգի,» բառերը 6. 16-րդ կետից հանել «, դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանագրի և օրագրի տիպային ձևերը.» բառերը 7. 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «18) որոշում է համապատասխան մակարդակի որակավորման նոր կրթական ծրագրեր մշակելու և		

			իրականացնելու մասին.» 8. 23-րդ կետում «կանոնները» բառից հետո լրացնել «էթիկայի և վարքագծի կանոնները», իսկ գործունեությունը բառից հետո հանել «կանոնակարգող ներքին իրավական ակտեր» բառերը, 9. 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «25) հաստատում է պետական բյուջեի միջոցներից տրամադրվող լրիվ կամ մասնակի կրթաթոշակ ստացող ուսանողների ցանկը.» 10. 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «26) հաստատում է ՄՈՒՀ-ի կողմից ուսանողներին կրթաթոշակների տրամադրման, ինչպես նաև ուսանողների ֆինանսական խրախուսման կարգը, պահանջները և չափանիշները.»: Վերևում թվարկված խմբագումները անհրաժեշտությունը պայմանավորված է դրույթների հստակ սահմանմամբ, ինչպես նաև՝ հաշվի առնելով ողջ օրենքնում նպաստ հասկացության փոխարինմամբ կրթաթոշակ հասկացությամբ և համապատասխան կարգավորումներով:		
75.	Կառավարություն	25-րդ հոդված, 2-րդ մաս, նոր 2-րդ և 3-րդ մասեր	1. 2-րդ մասը հանել, 2. Լրացնել 2-րդ և 3-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետում նշված ծախսերի նախահաշվի փոփոխությունները բյուջետային ծախսերի 5 տոկոսը չգերազանցելու և ընթացիկ	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			ծախսերի հանդիսանալու դեպքում կարող են հաստատվել տնօրենի կողմից: 3. Մինչև պետական ՄՈՒՀ-ի խորհրդի ձևավորումը, սույն հոդվածի 1-ին մասի 7)-րդ, 11)-րդ, 16)-րդ, 18)-րդ, 21)-րդ, 23-րդ), 24)-րդ, 25)-րդ և 26)-րդ կետերով նախատեսված լիազորությունները ժամանակավո-րապես իրականացնում է ՄՈՒՀ-ի տնօրենը:»: Լրացումը կատարվել է կարգավորելու համար այն խնդիրը, որն առաջանում է ՄՈՒՀ-ի խորհրդի ձևավորման իրավազորությունը տարբեր պատճառներով չի կարգավորվում տևական ժամանակ, ինչը կարող է խոչընդոտել հաստատության բնականոն գործունեությանը:		
76.	Կառավարություն	26-րդ հոդված, 4-րդ մաս, 5-րդ կետ Նոր 7-րդ մաս	«կուսակցություն» բառից առաջ լրացնել «քաղաքական» բառը: Լրացնել 7-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «7. ՄՈՒՀ-ի տնօրենն իր պաշտոնավարման ընթացքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն, իր պաշտոնեական դիրքը կամ աշխատանքային միջոցներն չօգտագործել կուսակցությունների կամ հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար կամ նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու կամ իր պաշտոնեական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու համար: » Նպատակը ձևակերպումների հստակեցման ապահովումն է, ինչպես նաև ՄԿՈՒ տնօրենի քաղաքական ու կրոնական գործունեության զսպումներն ու կրթության կառավարման դերի գերակայության ամրապնդումը՝ անկախ քաղաքական ու կրոնական համոզմունքներից:	Ընդունվել է	Ընդունվել է

77.	Կառավարություն	27-րդ հոդված, 2-րդ և 10-րդ մասեր	Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասեր. «2. «Անձը չի կարող դիմել հավաստագիր ստանալու համար, եթե առկա են 26-րդ հոդվածի **Ошибка! Источник ссылки не найден.**-րդ մասով նախատեսված հանգամանքները, ինչպես նաև, եթե անձի լիազորությունները ՄՈՒՀ-ի տնօրենի պաշտոնում դադարեցվել են սույն օրենքի 29-րդ հոդվածի **Ошибка! Источник ссылки не найден.**-րդ մասի 7-րդ կետով (եթե այդ հանգամանքները չեն վերացել) կամ **Ошибка! Источник ссылки не найден.**-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերով:»: 10. Հավաստագրի գործողությունը դադարեցվում է հավաստագիր ստացած անձի կողմից հավաստագիր ստանալու համար ներկայացրած փաստաթղթերում կեղծ տեղեկատվություն հայտնաբերվելու դեպքում, ինչպես նաև, եթե տնօրենի լիազորությունները դադարեցվել են սույն օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի 1)-ին, 2)-րդ կետով (բացառությամբ 26-րդ հոդվածի 4-րդ մասի 1)-ին և 5)-րդ կետերով նախատեսված դեպքի), 3)-րդ և 4)-րդ կետերով, ինչպես նաև 11-րդ կետերով նախատեսված հիմքերով:»: Նման առաջարկը պայմանավորված է ՄԿՈՒ ՈՒՀ կառավարման իրավունքի համար հավաստագրի դերն ու կշիռը բարձրացնելու, ոչ օրինաչափ և իրավախախտ ճանաչված և դեռևս պատիժը չմարված անձանց նկատմամբ զսպող և իրենց գործողություններում պատասխանատվության զգացումը բարձրացնելու միտումով:	Ընդունվել է	Ընդունվել է
78.	Կառավարություն	28-րդ հոդված, 1-ին մաս, 3-րդ մաս	1-ին մասում «6-րդ» բառից հետո ավելացնել և «11-րդ» բառը: 3-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «3. Նոր տնօրենը իր պաշտոնը ստանձնում է ՄՈՒՀ-ի	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			գործող տնօրենի լիազորությունների ժամկետի ավարտի կամ մեկ այլ հիմքով տնօրենի պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ նշանակման օրվանից:»: Հստակեցվել է տնօրենի պաշտոնի ստանձման ժամկետները և շտկվել են հղումները:		
79.	Կառավարություն	28-րդ հոդված, 4-րդ մաս	Հանել «Խորհրդի անդամի գնահատման չափանիշների ձևաթուղթը», բառերը: Խմբագրվել է ընտրության իրավունքը չկաշկանդելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
80.	Կառավարություն	28-ր հոդված, 10-րդ մաս.	Խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. 1.«10. Խորհուրդը քվեարկության արդյունքների վերաբերյալ որոշումն ուղարկում է լիազոր մարմին: Խորհրդում քվեարկության արդյունքներով հաղթող ճանաչված հավակնորդի հետ լիազոր մարմնի ղեկավարը 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է աշխատանքային պայմանագիր:»: Հստակեցվել է տնօրենի աշխատանքային պայմանագրի կնքման և տնօրենի պաշտոնի ստանձնման ժամկետները:	Ընդունվել է	Ընդունվել է
81.	Կառավարություն	29-րդ հոդված, 2-րդ և 5-րդ մասեր	1. 2-րդ մասում «Պետական» բառից հետո լրացնել «և հանրային» բառերը 2. 5-րդ մասում «որոշմամբ» բառը փոխարինել «լիազոր մարմնի համապատասխան ակտով» բառերով, իսկ 5-րդ մասի 4-րդ կետում նախադասության վերջում լրացնել «կամ անհայտ բացակայող » բառերը: Հստակեցվել է իրավական շրջանակը:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
82.	Կառավարություն	29-րդ հոդված, 6-րդ-11-րդ մասեր	Թվարկված մասերը և կետերը խմբագրել և լրացնելով նոր մասեր հետևյալ խմբագրությամբ՝ 6-15-րդ մասերով, «6. Պետական ՄՈՒՀ-ի տնօրենի լիազորությունները դադարեցվում են լիազոր մարմնի պատճառաբանված որոշման հիման վրա, եթե՝	Ընդունվել է	Ընդունվել է

			1) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ կամ առկա է սույն օրենքի 27-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված հիմքը. 4) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի. 5) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ վերջին ութ ամսվա ընթացքում՝ ավելի քան 120 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը, չի ներկայացել աշխատանքի. 7) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել կառավարչական և մանկավարժական գործունեության կատարմանը (հիվանդությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը): 7. Սույն հոդվածի 5-րդ մասի 1)-ին և 3)-րդ կետով, 6-րդ մասի 1)-ին, 2)-րդ և 4)-րդ կետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը: 8. Սույն հոդվածի 5-րդ մասի 2)-րդ կետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշանակված օրվանից: 9. Սույն հոդվածի 5-րդ մասի 4)-րդ կետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են մահվան օրվանից կամ դատարանի համապատասխան վճիռը օրինական ուժի մեջ մտնելու		

			օրվանից: 10. Սույն հոդվածի 6-րդ մասի 3)-րդ, 5)-րդ, 6)-րդ և 7)-րդ կետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում՝ նշելով որոշման իրավական և փաստական հիմքերը: 11. Պետական ՄՈՒՀ-ի խորհուրդը, սույն օրենքով և ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ սահմանված կարգով, կարող է քննարկել տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը և տնօրենի լիազորությունների դադարեցման հարցով դիմել լիազոր մարմնին, եթե՝ 1) ՄՈՒՀ-ի գործունեության տարեկան ծրագրի կամ զարգացման ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունը խորհրդի կողմից երկու անգամ անընդմեջ չի ընդունվել. 2) ՄՈՒՀ-ի ներքին և արտաքին գնահատման արդյունքների հիման վրա տնօրենի գործունեությունը խորհրդի կողմից ճանաչվել է անբավարար. 3) պաշտոնավարման ընթացքում թույլ է տվել ուսումնադաստիարակչական գործառույթների հետ անհամատեղելի արարք: 12. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված կառուցակարգը 1)-ին և 2)-րդ կետերով նախատեսված հիմքերով կարող է կիրառվել ոչ շուտ, քան ՄՈՒՀ-ի տնօրենի նշանակումից մեկ տարի հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը երկրորդ անգամ անընդմեջ է նշանակվել համապատասխան ՄՈՒՀ-ի տնօրենի պաշտոնում: 13. Սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված հարցով որոշումն ընդունվում է խորհրդի անդամների առնվազն հինգ ձայնով: 14. Պետական կառավարման լիազոր մարմինը սույն		

			հոդվածի 11-րդ մասով նախատեսված դիմումը ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում կարող է պատճառաբանված հիմնավորմամբ մերժել Խորհրդի դիմումը: 15. Սույն հոդվածի 14-րդ մասով նախատեսված որոշումը չկայացվելու դեպքում, լիազոր մարմինը լուծում է տնօրենի հետ կնքված պայմանագիրը՝ խորհրդի որոշումը ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում:»: Խմբագրման նպատակը՝ տնօրենի լիազորությունների դադարեցման ընթացակարգերի, ժամկետների և գործողությունների կատարման հստակեցումն է:		
83.	Կառավարություն	30-րդ հոդված, 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 11-րդ կետեր	3-րդ, 5-րդ և 11-րդ կետերը խմբագրել հետևյալ խմբագրությամբ. «3) ներկայացնելու առաջարկներ իր որակավորման կրթական ծրագրի բովանդակության և ուսումնառության կազմակերպման ձևի բարելավման վերաբերյալ, 5) օգտվելու կրթաթոշակից և ուսանողների ֆինանսական խրախուսման այլ ձևերից, ներառյալ՝ անվանական կրթաթոշակից, նվիրատվություն-ներից և դրամաշնորհներից. 11) բողոքարկելու ՄՈՒՀ-ի ներքին իրավական ակտերը, իր իրավունքները պաշտպանելու դատական կարգով. Ընդլայնվել է ուսանողի իրավունքները և դրանք պաշտպանելու հնարավորությունները, ինչպես նաև հանվել է նպաստ ձևակերպումը:	Ընդունվել է	Ընդունվել է

84.	Կառավարություն	30-րդ հոդված, 2-րդ մաս	Լրացնել նոր 2-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ՝ «2) մասնակցել համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրի ուսումնառությանը. Հստակեցվել է ուսանողի պարտավորությունների շրջանակը:	Ընդունվել է	Ընդունվել է
85.	Կառավարություն	30-րդ հոդված, նոր 3-րդ մաս	լրացնել նոր 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Ուսանողական ինքնակառավարման մարմինները ՄՈՒՀ-ում և դրա համապատասխան կառուցվածքային միավորներում գործում են որպես ուսանողական ներկայացուցչական մարմիններ:»: Ավելացվել է դրույթ ուսանողների իրնքնակառավարման մարմինների գործելու հնարավորության վերաբերյալ:	Ընդունվել է	Ընդունվել է
86.	Կառավարություն	30-րդ հոդված 7-րդ մաս (նոր 8-րդ մաս)	2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ակադեմիական արձակուրդ տրամադրելու հիմքերը, կարգը և ժամկետները, ինչպես նաև ուսանողի կարգավիճակը վերականգնելու ժամկետները սահմանում է լիազոր մարմինը:»: Հստակեցվել է լիազորող նորմ:	Ընդունվել է	Ընդունվել է
87.	Կառավարություն	30-րդ հոդված, 8-րդ (նոր 9-րդ) մաս	«դիմումը ներկայացրել է» բառերից հետո շարադրել. «լիազոր մարմնի սահմանած ժամկետում:» Ժամկետների սահմանումը կկարգավորվի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով:	Ընդունվել է	Ընդունվել է
88.	Կառավարություն	31-րդ հոդված, 4-րդ մասի 2-րդ կետ	«տվյալ» բառից փոխարինել «համապատասխան» բառով, իսկ «աշխատանքներում» բառը փոխարինել «աշխատանքներին» բառով: Հստակեցվել է ձևակերպումը:	Ընդունվել է	Ընդունվել է
89.	Կառավարություն	32-րդ հոդվածի վեռնագիր, 1-ին մաս	Վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 1. **«Հոդված 32. Ուսանողների ուսման վարձը և**	Ընդունվել է	Ընդունվել է

			կրթաթոշակը»: 1-ին մասում «դեպքերի» բառից հետո լրացնել «կամ եթե փոփոխությունը բարենպաստ է ուսանողի համար» բառերը: Վերնագրում փոփոխությունը պայմանավորված է սույն օրենքում նպաստի փոխարեն կրթաթոշակի սահմանման տրամաբանությամբ, իսկ առաջին մասում լրացումը ապահովում է որևէ փոփոխության դեպքում առավել նպաստավոր պայմանների ապահովմանը:		
90.	Կառավարություն	32-րդ հոդված, 3-րդից 6-րդ մասեր	3-6-դր մասերը միավորելով խմբագրվել է և շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «3. Պետության կողմից կրթաթոշակը, տրամադրվում է Կառավարության հաստատած տեղերի քանակին, չափանիշներին, չափին և կարգին համապատասխան՝ ուսանողի ակադեմիական առաջադիմության, գործնական աշխատանքային ուսուցման ընթացքում ձեռք բերած արդյունքների, հետազոտական աշխատանքների, մասնագիտական նվաճումների, հասարակական ակտիվության, սոցիալական, առողջական վիճակի ու օրենքով սահմանված այլ հիմքերով, ինչպես նաև ուսանողի կեցության, տրանսպորտային ծախսերի, սննդի և օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Կրթաթոշակը ստացող ուսանողը, ուսումնական տարվա արդյունքներով, կարող է ենթարկվել փոխատեղման: 4. Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող որակավորումներով կամ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի կամ նպատակային ուսուցման այլ հիմքերով ընդունված ուսանողներին կրթաթոշակը տրամադրվում է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերից անկախ:»:	Ընդունվել է	Ընդունվել է

			Ըստ էության կատարվել է գործառույթների համակարգված սահմանում և գործողությունների հաջորդականության սահմանում		
91.	Կառավարություն	32-րդ հոդված, 8-րդ, 9-րդ և 11-րդ մասեր	Նշված կետերը հանել: Առաջակը պայմանավորված է գործառույթները հստակեցնելով: Անհրաժեշտ բոլոր սկզբունքները ձևակերպված են նույն հոդվածում:	Ընդունվել է	Ընդունվել է
92.	Կառավարություն	34-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին և 2-րդ կետ, 2-րդ մաս, 11-րդ մաս	Խմբագրել, հստակեցնել, նախատեսել անցումային նորմ՝ գործող, սակայն սահմանված պահանջներին չհամապատասխանող մանկավարժական աշխատողների համար: Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1)դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ՝ բարձրագույն կրթություն, կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ, կամ» «2) բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և դասավանդվող մոդուլային ծրագրի համար հիմնարար համարվող որակավորմամբ երաշխավորված լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտական ուսուցման վկայական և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ, իսկ»: Լրացնել 2-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ՝ «2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով հիմնարար է համարվում դասավանդվող մոդուլային ծրագրի	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է

			բովանդակության առնվազն 30 տոկոսը:» 11-րդ մասը հանել: Առաջարկը խմբագրական բնույթի է:	Ընդունվել է	Ընդունվել է
93.	Կառավարություն	34-րդ հոդված 4-րդ մաս (նոր 5-րդ)	«ՄՈՒՀ-ում սահմանվում են մանկավարժական կազմի հետեւյալ պաշտոնները» բառերը փոխարինվել են «Մանկավարժական աշխատողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ աստիճանակարգությամբ՝»: Հստակեցվել է ձևակերպումը:	Ընդունվել է	Ընդունվել է
94.	Կառավարություն	34-րդ հոդված 4-րդ մաս (նոր 5-րդ) 4-րդ կետ	հանվել է գործընկեր «կազմակերպության հետ համաձայնությամբ» բառերը: Նշյալ կետով թվարկված են պաշտոնները, և ավելորդ են վերոնշյալ հանված բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
95.	Կառավարություն	35-րդ հոդված 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր	3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը խմբագրվել է և շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «3. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանութ-յունը ստուգելու նպատակով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով իրականացվում է հիմնական աշխատող հանդիսացող դասախոսի կամ վարպետի, իսկ համատեղությամբ աշխատող մանկավարժական աշխատողների և հրահանգիչների դեպքում՝ վերջիններիս ցանկությամբ, ատեստավորում՝ երեք տարին մեկ անգամ:»: «4. Մինչև սահմանված ժամկետի լրանալը ՄՈՒՀ-ի մանկավարժական աշխատողը կարող է դիմել արտահերթ ատեստավորման, բայց ոչ շուտ, քան հերթական ատեստավորումից մեկ տարի հետո:»: «5. ՄՈՒՀ-ը յուրաքանչյուր ատեստավորման համար ձևավորում է ատեստավորման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են կրթության պետական	Ընդունվել է	Ընդունվել է

			կառավարման լիազոր մարմնի և գործատուների ներկայացուցիչները:»: Հստակեցվել են ատեստավորման ընթացակարգերն ու ժամկետները:		
96.	Կառավարություն	35-րդ հոդված, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասեր	6-րդ մասում «ուսուցչի» բառից հետո լրացնել «վերապատրաստման» բառը Լրացումը կատարվել է ՄԿՈՒ համակարգում հանրակրթական առարկաներ դասավանդողների նկատմամբ միասնական մոտեցում սահմանելու նպատակով: 7-րդ և 8-րդ մասերը հանել, հարցը նպատակահարմար է կարգավորել ենթաօրենսդրական ակտով	Ընդունվել է	Ընդունվել է
97.	Կառավարություն	35-րդ հոդված, 9-րդ մաս (նոր 7-րդ), 11-րդ մաս (նոր 9-րդ),	Համարակալել որպես 7-րդ և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7.Մանկավարժական աշխատողը ՄՈՒՀ-ի միջոցների հաշվին կամ օրենքով չարգելված այլ միջոցներով կարող է անցնել վերապատրաստում՝ պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած վերապատրաստման ծրագրի ուղղություններին համապատասխան, որոնք միտված են 34-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված մանկավարժական պաշտոնների մասնագիտական չափանիշների պահանջների ապահովմանը:»: «մասնակավրաժան» բառի փոխարարինել «ատեստավորման համար մանկավարժական» բառերով: Հստակեցում է կատարվել և նախատեսվել է ՄՈՒՀ-ի միջոցներով վերապատրաստման հնարավորությունը և նպատակը:	Ընդունվել է	Ընդունվել է
98.	Կառավարություն	35-րդ հոդված, 16-րդ մաս (նոր 14-րդ)	«15» թիվը փոխարինել «13» թվով և հանել «չափին հավասար» բառերը: Փոփոխության նպատակն է շտկել հղման	Ընդունվել է	Ընդունվել է

			համարակալումը, ինչպես նաև համապատասխանեցնել 13-րդ մասի սահմանմանը:		
99.	Կառավարություն	35-րդ հոդված, 19-րդ մաս (նոր 17-րդ)	«Հղի և» բառերը փոխարինել «Հղի կամ» բառերով: Փոփոխության նպատակն է շտկել սահմանումը:	Ընդունվել է	Ընդունվել է
100.	Կառավարություն	35-րդ հոդված 21-րդ և 23-րդ մասեր (նոր 19-րդ և 21-րդ մասեր)	Համարակալումը փոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «19.Ատեստավորված ՄՈՒՀ մանկավարժական աշխատողը իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել դասախոսի, վարպետի կամ հրահանգչի տարակարգի շնորհման և բարձրացման գործընթացին: 21.Տարակարգի շնորհման մասին որոշումն ընդունվում է սույն հոդվածի 24-րդ մասով նախատեսված չափանիշների ապահովումն հավաստող փաստաթղթային ստուգման եղանակով՝ մանկավարժական աշխատողի տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի կողմից:»: Հստակեցվել է տարակարգերի շնորհման և բարձրացման գործընթացը և եղանակը:	Ընդունվել է	Ընդունվել է
101.	Կառավարություն	36-րդ հոդված 1-ին և 2-րդ մասեր	1-ին և 2-րդ մասերը խմբագրել և կարգավորել մեկ մասում: Նոր 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը ՄՈՒՀ-ին սեփականության կամ օգտագործման իրավունքով օրենքով սահմանված կարգով տրամադրում է անհրաժեշտ գույք:» Խմբագրումը կատարվել է օրենսդրական հստակեցման նպատակով և շտկվել է համարակալումը:	Ընդունվել է	Ընդունվել է
102.	Կառավարություն	37-րդ հոդված 1- 6-րդ մաս (նոր 1-ին	1-5-րդ մասերը հանել, իսկ 6-րդ մասը համարակալել որպես 1-ին մաս և շարադրել հետևյալ կերպ.	Ընդունվել է	Ընդունվել է

		մաս) Նոր 1-ին մաս,	«1. ՄՈՒՀ-ի գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են՝»: 1-ին մասի 6-րդ կետում «միջոցները» բառից հետո լրացնել «բացառությամբ պետական ՄՈՒՀ-երի,» բառերը, քանի պետական ՄՈՒՀ-երը հիմնականում ՊՈԱԿ-ներ են և չեն կարող ունենալ վարկային միջոցներ: ֆինանսավորման մոտեցումները և սկզբունքները, ինչպես նաև մասերը խմբագրվել են և դասավորվել են ըստ տրամաբանական հաջորդականության:		
103.	Կառավարություն	37-րդ հոդված 7-րդ մասի (նոր 2-րդ) 1-ին կետ, 3-րդ կետ	7-րդ մասի (նոր 2-րդ) վերջին Ինստիտուցիոնալ ֆինանսավորման հիմք են նաեւ «ՄՈՒՀ-ի գործունեության արդյունքային ցուցանիշները.» նախադասությունը հանել, իսկ «ինչպես նաև» բառերից հետո լրացնել «կրթության կազմակերպման և» բառերը: Հանել 3-րդ կետը Փոփոխությունների պայմանավորված են կրթաթոշակի սահմանման գաղափարով, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում:	Ընդունվել է	Ընդունվել է
104.	Կառավարություն	37-րդ հոդված 8-րդ մաս (նոր 3-րդ)	«բյուջեի միջոցներից» հետո լրացնել և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «պետական ՄՈՒՀ-երին տրամադրվում է ֆինանսավորում», այնուհետև ինչպես տեքստում: Ձևակերպումը ճշգրտվել է:	Ընդունվել է	Ընդունվել է
105.	Կառավարություն	37-րդ հոդված 9-րդ մաս (նոր 4-րդ)	Լրացնել 4-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ. «4.Պետական և հանրային ՄՈՒՀ-երի ֆինանսավորումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ՄՈՒՀ-երի գործունեության և սույն օրենքի 7-րդ հոդվածի 0-րդ մասով սահմանված համապատասխան մակարդակի որակավորման կրթական ծրագրերի իրականացման	Ընդունվել է	Ընդունվել է

			ծախսերի ֆինանսական հաշվարկը:» Սահմանվել են պետական բյուջեից ֆինանսավորման հիմքերը:		
106.	Կառավարություն	37-րդ հոդված, նոր 5-րդ մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ կետեր	1. 8-րդ կետում «գործընկեր կազմակերպության» բառերը փոխարինել «ՄՈՒՀ-ի հետ համագործակցող գործատուների» բառերով, 2. 11-րդ և 12-րդ կետերը միավորելով շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «11) իրականացնել կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և այլ բնույթի գործունեություն և կազմակերպել միջոցառումներ: Խմբագրմամբ պայմանավորված՝ 13-րդ կետերը հանել Փոփոխություններով կարգավորվել են ֆինանսավորման մոտեցումները և սկզբունքները, ինչպես նաև մասերը դասավորվել են ըստ տրամաբանական հաջորդականության:	Ընդունվել է	Ընդունվել է
107.	Կառավարություն	37-րդ հոդված Նոր 8-րդ, 9-րդ և 10-րդ մասեր	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասեր. «8. ՄՈՒՀ-երը սահմանված կարգով իրականացնում են իրենց տնտեսական և ֆինանսական գործունեության հաշվապահական հաշվառումը: 9. ՄՈՒՀ-ի տնտեսական և ֆինանսական գործունեության վերահսկողությունը, իրենց լիազորությունների սահմանում, իրականացնում են լիազոր մարմինները: 10. ՄՈՒՀ-ի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել անկախ աուդիտի (վերստուգման)՝ Կառավարության սահմանած կարգով:»	Ընդունվել է	Ընդունվել է

			Փոփոխություններով կարգավորվել են ֆինանսավորման մոտեցումները և սկզբունքները, ինչպես նաև մասերը դասավորվել են ըստ տրամաբանական հաջորդականության:		
108.	Կառավարություն	38-րդ հոդված	38-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ այն դրույթների, որոնց համար սույն հոդվածով սահմանված են ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ: 2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164 Հայաստանի Հանրապետության օրենքը՝ բացառությամբ 7-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ մասերի, 18-րդ, 18.1-րդ, 20-րդ հոդվածի, որոնք ուժը կորցնում են սույն հոդվածի 0-րդ, 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված համապատասխան նորմատիվ իրավական ակտերի ընդունման պահից: 3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, 7-14-րդ մասերով, 8-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, 15-րդ հոդվածի 16-18-րդ մասերով, 22-29-րդ հոդվածներով նախատեսված դրույթների իրականացումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ենթակա են ընդունման համաձայն Վարչապետի որոշմամբ հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի, բայց ոչ ուշ, քան մինչև 2026 թ. հունվարի 31-ը: 4. Մինչև սույն օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի ուժի մեջ մտնելը ընդունված մասնագիտական կրթության համապատասխան որակավորման պետական կրթական չափորոշիչները շարունակում են գործել մինչև սույն օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերին համապատասխանեցումը, իսկ այդ չափորոշիչների հիման վրա շնորհված և շնորհվող որակավորումները պահպանում են իրենց վավերականությունը: Մինչև	Ընդունվել է	Ընդունվել է

			կրեդիտային համակարգի ներդրումը, սույն օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով նախատեսված կրեդիտները հաշվարկվում են ժամային բեռնվածությամբ: 5. Սույն օրենքի 11-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2025թ. հուլիսի 1-ից: Սույն օրենքի 11-րդ հոդվածով առաջացող նոր պահանջներին ու պայմաններին պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ապահովվում է Կառավարությունը՝ Վարչապետի կողմից սահմանած ժամանակացույցով: 6. Սույն օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, բացառությամբ սույն հոդվածի 0-րդ մասով նախատեսվածների, ենթակա են ընդունման մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը՝ համաձայն Վարչապետի որոշմամբ հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի : Մինչև սույն օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը շարունակում են գործել մինչև սույն օրենքի ընդունումը ուժի մեջ մտած համապատասխան իրավահարաբերություն-ները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը: 7. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի համակարգը ներդրվում է մինչև 2027 թվականի հունվարի 15-ը: Մինչ այդ դիպլոմը և դրա հավելվածը, հավաստագիրը և ներդիրը ՄՈՒՀ-ի կողմից ուսանողին տրամադրվում է թղթային եղանակով և անվճար: 8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ձևավորված պետական ՄՈՒՀ-երի խորհուրդները շարունակում են գործել, մինչև սույն հոդվածի 0-րդ մասով սահմանված ժամանակացույցով սույն օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան նոր խորհուրդների ձևավորումը: Սույն օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան նոր ձևավորվող խորհուրդների առաջին կազմում յուրաքանչյուր մարմնի կողմից առաջադրվող		

			համապատասխանաբար մեկական անդամ (բացառությամբ ուսանողության ներկայացուցիչների) պաշտոնավարում է երկու տարի ժամկետով, իսկ մեկական անդամ՝ երեք տարի ժամկետով: Մանկավարժական աշխատողներից առաջադրվող մեկ անդամ պաշտոնավարում է 4 տարի, իսկ մյուսը՝ 5 տարի ժամկետով: 9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ընտրված պետական ՄՈՒՀ տնօրենները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: 10. ՄՈՒՀ-ում աշխատող այն դասախոսները կամ վարպետները, որոնք առնվազն 3 տարի աշխատում են տվյալ պաշտոնում, սակայն չեն համապատասխանում սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, կարող են շարունակել իրենց պաշտոնավարումը, եթե մինչև 2030 թվականի օգոստոսի 20-ը ստացել են համապատասխան մակարդակի կրթական ծրագրի որակավորում և ապահովում օրենքով սահմանված պահանջները: 11. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընդունված նորմատիվ իրավական ակտերում առկա նախ-նական (արհեստագործական) մասնագիտական կրթությանը վերաբերող կարգավորումները սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո տարածվում են սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում սահմանված արհեստագործական հիմնական կրթական ծրագրի նկատմամբ:»: Հաշվի առնելով, որ նախագծում խմբագրվել են հոդվածները, որի արդյունքում փոխվել են մի շարք համարակալումներ, ինչպես նաև վերանայվել է որոշ գործընթացների և կատարման ժամկետների ողջամտությունը անցումային դրույթներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:		

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
109.	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
110.	Կառավարություն	1-ին հոդված, 1-ին մաս, 1-ին կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1.8) **սոցիալական գործընկերություն՝** բարձրագույն և մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպությունների, գործատուների, դրանց միավորումների և ոչ առևտրային այլ կազմակերպությունների, արհեստակցական միությունների, հանրային իշխանության մարմինների միջև աշխատաշուկայի և տնտեսության զարգացման կարիքներին համապատասխան կրթության ապահովմանը համընդհանուր համաձայնեցված նպատակների իրականացմանը միտված կրթական, աշխատանքային, գործընկերային ու սոցիալական համագործակցության դրսևորման ձև.»: Փոփոխությունը պայմանավորված է հասկացության առավել համակողմանի, համագործակցության բոլոր կողմերին ընդգրկող և միջազգային մոտեցումներին համահունչ սահմանում տալու անհրաժեշտությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
		6-րդ կետ	«ուսումնական» բառից առաջ լրացնել «մասնագիտական» բառը: Լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է «Մասնագիտական կրթության և ուսուցման» օրենքի սահմանման համապատասխանեցմամբ: 7-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամ. «7) Օրենքի 17-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:»:	Ընդունվել է	Ընդունվել է

		7-րդ կետ	«Որակի ապահովում» հասկացության լրացուցիչ սահմանման անհրաժեշտություն չկա, քանի որ խնդրի էությունը բացատրվում է համապատասխան ինստիտուտներին վերաբերվող նորմերում, մինչդեռ սահմանումները ավելորդ ծանրաբեռնում են իրավական ակտը:	Ընդունվել է	Ընդունվել է
		8-րդ կետ	«ատեստավորում» բառերը փոխարինել «ատեստավորման» բառով, իսկ «ստուգում» բառը «ստուգման» բառով՝ հոլովաձևը համապատասխանեցնելով գործող օրենքի ձևակերպմանը: Առաջարկն ունի խմբագրական բնույթ:	Ընդունվել է	Ընդունվել է
		10-րդ կետ	10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «17.3) **ոլորտային որակավորումների շրջանակ (այսուհետ՝ ՈՈՇ)՝** որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ որոշակի ոլորտում կրթական մակարդակի որակավորումների խումբ (ցանկ, ամբողջություն) և դրա հետ կապված ուսումնառության ընդհանուր վերջնարդյունքները ապահովելու պահանջներ (բնութագիր).» Առաջարկը պայմանավորված է հասկացության առավել համակողմանի և միջազգային մոտեցումներին համահունչ սահմանում տալու անհրաժեշտությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
		11-րդ կետ	Օրենքի 18-րդ կետում Հավատարմագրման հասկացության բովանդակությունից հանել «ինստիտուցիոնալ (այսուհետ՝ ինստիտուցիոնալ) կամ կրթական ծրագրի (այսուհետ՝ ծրագրային)» բառերը և հստակեցնել, որ այն արտաքին գնահատման գործընթաց է և «գնահատման» բառից առաջ լրացնել «արտաքին» բառը: Հավատարմագրման գործընթացները լրացուցիչ ուսումնասիրության և հետագայում ենթաօրենսդրական	Ընդունվել է	Ընդունվել է

		11-րդ կետ	ակտերով մանրամասնեցման կարիք ունեն: Օրենքի մակարդակով մանրամասների սահմանումը կարող է հետագայի համար խնդրահարույց լինել՝ միջազգային լավագույն փորձի ներքո լավագույն լուծումներ գտնելու տեսանկյունից: Օրենքի 18.1-րդ կետում «արհեստավոր» որակավորման աստիճանից հետո լրացնել «կամ կրտսեր մասնագետ» որակավորման աստիճանը, որպեսզի առանձին տեսակի որակավորումների մասով, որոնց բնույթը արհեստավոր կատեգորիան ճիշտ չի արտացոլում հնարավոր լինի ներառել, ինչպես նաև լրացումը պայմանավորված է ՄԿՈՒ օրենքի լրացումից:	Ընդունվել է	Ընդունվել է
111.	Կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին կետ 2-րդ կետ	«Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը հանել «Կառավարության» բառը գրել մեծատառ: Առաջարկը պայմանավորված է նորմատիվ իրավական ակտերում գրելաձևի միասնականության ապահովմամբ: Հանել «Լեռնային Ղարաբաղի» բառերը, հայտնի իրադարձություններով պայմանավորված:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
112.	Կառավարություն	5-րդ հոդված, 2-րդ մաս	2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը կամ ոլորտային որակավորումների շրջանակը:»: Առաջարկը առավելապես խմբագրական է՝ կոչված կրթության կազմակերպման ձևերի վերաբերյալ հոդվածի բովանդակության առավել ճիշտ արտահայտմանը, ինչպես նաև նախագծերի փաթեթում ՈՈՇ հասկացության ներմուծմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

113.	Կառավարություն	7-րդ հոդված, 2-րդ կետ	2-րդ կետով շարադրվող Հոդվածի 3-րդ մասը խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «3. Մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան մակարդակի ոլորտային որակավորումների շրջանակի բնութագրերի հիման վրա կրթության պետական կառավարման լիազոր մարմինը կազմում և հաստատում է տվյալ մակարդակի յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագիր, որի հիման վրա մասնագիտական ուսումնական հաստատությունները մշակում ու հաստատում են համապատասխան մակարդակի որակավորումն ապահովող կրթական ծրագիրը, դրա ուսումնամեթոդական փաթեթը: Առաջարկը խմբագրական է և բխում է ՄԿՈւ օրենքի նախագծի 7-րդ հոդվածով «համապատասխան մակարդակի յուրաքանչյուր որակավորման կրթական ծրագրի շրջանակային նկարագիր» հասկացության ներմուծմամբ և դրա ձևավորման գործընթացի կարգավորմամբ: Մանրամասները կարգավորվում են ՄԿՈՒ օրենքի նախագծում և կարիք չկա «Կրթության մասին» օրենքը ծանրաբեռնել կրկնվող դրույթներով:	Ընդունվել է	Ընդունվել է
114.	Կառավարություն	8-րդ հոդվածի 2-րդ կետ	«4-րդ» բառը փոխարինել «3-րդ» բառով: Առաջարկը խմբագրական բնույթի է, ճիշտ հղումը ապահովելու համար:	Ընդունվել է	Ընդունվել է
115.	Կառավարություն	9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր	Առաջարկում ենք հստակեցնել «նախնական (արհեստագործական) մասնագիտական» հասկացության միատեսակ կիրառումը, որի արդյունքում տեքստը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «1) առաջին պարբերությունից հանել «նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին» բառերը, 2) երկրորդ պարբերությունից հանել «նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին» բառերը, 3) երրորդ պարբերությունը ուժը կորցրած	Ընդունվել է	Ընդունվել է

			ճանաչել:»:		
116.	Կառավարություն	10-րդ հոդված	Առաջարկում ենք հանել 10-րդ հոդվածը: Ըստ այդմ՝ հաջորդիվ հոդվածների համարակալումը վերանայել է: Վերը նշված փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող օրենքի համապատասխան դրույթը (19-րդ հոդված) արդեն իսկ ուժը կորցրել է:	Ընդունվել է	Ընդունվել է
117.	Կառավարություն	11-րդ (նոր 10-րդ) հոդվածի 2-րդ մաս 4-րդ (նոր 3-րդ) մաս	Հանել կրթական ծրագրի նկարագրին վերաբերող մանրամասնությունները, քանի որ հարցը կարգավորվել է ՄԿՈ մասով ՄԿՈ օրենքի նախագծի 7-րդ հոդվածում, իսկ ԲՈՒհ-եր մասով պետք է կարգավորվի ոլորտային օրենքով: Ըստ այդմ, կարիք չկա «Կրթության մասին» օրենքը ծանրաբեռնել կրկնվող դրույթներով: Շտկել համարակալումը: «շրջանակը» բառից հետո լրացնել «և դրա բնութագրերը» բառերը: Լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է հստակ սահմանման և «Մասնագիտական կրթության և ուսուցման» օրենքի սահմանման համապատասխանեցմամբ:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
118.	Կառավարություն	13-րդ (լրամշակված 12-րդ) հոդված	Հաշվի առնելու ՄԿՈ օրենքի նախագծի 7-րդ հոդվածի նոր խմբագրությունը և դրա հետ համահունչ լինելու նպատակով, հոդվածում առաջարկվող փոփոխությունը վերաշարադրել հետևյալ կերպ՝ «1. Մասնագիտական կրթությունն իրականացվում է հետևյալ կրթական ծրագրերի մակարդակներով. 1) արհեստագործական հիմնական կրթական ծրագիր՝ արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորում. 2) միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագիր՝ մասնագետի որակավորում. 2. Մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է մշակել և իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնցով ձեռք բերված ուսումնառության արդյունքները վկայագրվում են և հիմք	Ընդունվել է	Ընդունվել է

			են միկրորակավորման համար: 3. Մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ըստ որակավորումների իրականացնել նաև փորձարարական կրթական ծրագրեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով: 4. Միջին մասնագիտական կրթական ծրագրի համապատասխան որակավորման ուսումնառությունը բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտը կարող է կրթությունը շարունակել բարձրագույն կրթության համապատասխան որակավորման առաջին մակարդակում՝ ձեռք բերված կրեդիտներին կամ համեմատվող ծրագրերի ակադեմիական տարբերությունների ողջամիտ ծավալին համապատասխան՝ լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ: Մասնագիտական կրթության ծրագրերի հաջորդական շարունակման կարգը սահմանում է Կառավարությունը: 5. Մասնագիտական կրթության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե այլ բան նախատեսված չէ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտները կարգավորող օրենքներով:»: Համարակալումը համապատասխանաբար փոփոխվել է:		
119.	Կառավարություն	15-րդ (նոր 14-րդ) հոդվածի 1-ին կետ	Հանել «և ցանկերը» բառերը: Հանելու անհրաժեշտությունը պայմանավորված է «Մասնագիտական կրթության և ուսուցման» օրենքի սահմանման համապատասխանեցմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
120.	Կառավարություն	16-րդ (նոր 15-րդ) հոդվածի 6.1-րդ կետ 7-րդ կետ	1-ին կետի 6.1) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6.1) կազմում և հաստատում է ոլորտային որակավորումների շրջանակը, որակավորումների ցանկերը և որակավորումների բնութագրերը, »	Ընդունվել է	Ընդունվել է

		2-րդ կետ	Հանել: Լրացնել նոր 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. «4) Ուժը կորցրած ճանաչել 14.4-րդ կետը:»: Առաջարկները պայմանավորված են ՄԿՈՒ օրենքով Կառավարության և լիազոր մարմնի գործառույթների հստակեցմամբ:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
121.	Կառավարություն	19-րդ (նոր 18-րդ) հոդված	Առաջարկում ենք 19-րդ (լրամշակված 18-րդ) հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. 1. «Սույն օրենքով նախատեսված կրթական ծրագրերը և նախադպրոցական ծառայությունը կարող են իրականացվել հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն կրթության մակարդակի համապատասխան կրթական ծրագրի իրականացման իրավունքի, ինչպես նաև յուրաքանչյուր աստիճանի ու որակավորումների համար լիցենզիայի հիման վրա՝ Կառավարության սահմանած կարգով ու պայմաններով: 2. Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: 3. Կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման պայման է՝ 1) կրթական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ շենքի և ուսումնական տարածքի առկայությունը, որի նկատմամբ ուսումնական հաստատությունը ունի սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունք. 2) ուսումնական գործընթացին օժանդակող սպորտային տարածքի կամ դրա օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը և գրադարանային համապատասխան հագեցվածությամբ տարածքների առկայությունը՝ լիազոր	Ընդունվել է	Ընդունվել է

			մարմնի կողմից սահմանված սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան. 3) լսարանային, գործնական ուսուցման գործընթացին օժանդակող ուսումնաարտադրական-կան, լաբորատոր տարածքների և բազաների առկայությունը՝ սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան. 4) ուսումնական հաստատության հինգ տարվա ռազմավարական ծրագրի առկայությունը: 4. Կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիան տրվում է հետևյալ պայմանները ապահովելու դեպքում՝ 1) տվյալ կրթական ծրագրի աստիճանի (մակարդակի) կամ որակավորման ուղղվածությանը համապատասխան լաբորատորիաների, ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոց), ուսումնական գույքի և սարքավորումների, գրադարանային-տեղեկատվական համակարգի, առկայությունը կամ դրանց օգտագործման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած հագեցվածության չափաքանակների. 2) տվյալ կրթական ծրագրի աստիճանը (մակարդակի) կամ որակավորումը (ուղղվածությունը) ապահովող փաստաթղթերի և ուսումնամեթոդական փաթեթի առկայությունը. 3) տվյալ կրթական ծրագրի աստիճանը (մակարդակի) կամ որակավորումը (ուղղվածությունը) ապահովելու համար անհրաժեշտ մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների առկայությունը: 5. Լիցենզավորման, լիցենզիայի գործողության կասեցման, դադարեցման, բողոքարկման և այլ իրավահարաբերությունները կարգավորվում են լիցենզավորման և կրթության համապատասխան մակարդակի իրավահարաբերությունները կարգավորող		

			օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով: Կրթության համապատասխան մակարդակը կարգավորող օրենքով կարող է սահմանվել լիցենզավորման լրացուցիչ պայմաններ: 6. Կրթական ծրագրերի, ինչպես նաև համապատասխան կրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորումների մասով արված սահմանային տեղերի փոփոխությունը՝ սահմանվում է լիցենզիայի ներդիրում, և յուրաքանչյուր փոփոխության դեպքում տրվում է հերթական ներդիր:»: Խմբագրման նպատակն է հստակեցնել, թե որ մարմինն է տրամադրում լիցենզիա, ով է սահմանում հագեցվածության չափաքանակներ և որտեղ են սահմանվում սահմանային տեղերի փոփոխությունները: Փոփոխությունները պայմանավորված են ՄԿՈՒ օրենքի նախագծի համապատասխան դրույթների փոփոխությամբ (հոդված 11):		
122.	Կառավարություն	20-րդ հոդված	Հանել գործող օրենքի 42-րդ հոդվածում՝ պետական հավատարմագրում, առաջարկվող փոփոխությունները, քանի որ գործող օրենքը այս պահին առավել համակարգված է կարգավորում հարցի էությունը: Հավատարմագրման գործընթացների միջազգային պրակտիկան պահանջում է լրացուցիչ համապարփակ ուսումնասիրություն և այս պահին փոփոխությունները ժամանակավրեպ են:	Ընդունվել է	Ընդունվել է
123.	Կառավարություն	24-րդ (լրամշակված 22-րդ) հոդվածի 2-րդ կետ 5-րդ կետ	«Հայաստանի Հանրապետության» բառերը հանել, «Կառավարության» բառը գրել մեծատառով: 5-րդ կետով առաջարկվող 10-րդ մասի խմբագրումը հանել, քանի որ առաջարկվող փոփոխությունը սպառել է անհրաժեշտությունը:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
124.	Կառավարություն	25-րդ (լրամշակված 23-րդ) հոդված 1-ին մաս	Հաշվի առնելով նախագծերի փաթեթում տեղի ունեցած փոփոխությունները անցումային դրույթները խմբագրել հետևյալ կերպ.	Ընդունվել է	Ընդունվել է

			«1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի նոր խմբագրության, 10-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 21-րդ հոդվածի նոր խմբագրության, 12-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի, որոնցով նախատեսված դրույթները ներդրվում են և դրանց հետ կապված նորմատիվ իրավական ակտերը ենթակա են ընդունման համաձայն Վարչապետի որոշմամբ հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թ. հուլիսի 31-ը: Սույն օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 41-րդ հոդվածի նոր խմբագրությունը ուժի մեջ է մտնում 2025թ. հուլիսի 1-ից:»		
		2-րդ մաս	2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել, «կառավարության» բառը գրել մեծատառով:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
N	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
125.	Կառավարություն		Նախագիծը հիմնավորապես վերանայել՝ հաշվի առնելով առողջապահության, աշխատանքի, սոցիալական ոլորտների գերատեսչությունների հետ Կառավարության հանձնարարականով իրականացված քննարկումների արդյունքները և ներկայացված առաջարկները: Աշխատանքային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունների հիմնական էությունն այն է, որ մի կողմից ստեղծվեն օրենսդրական մեխանիզմներ աշխատանքի վրա հիմնված ուսուցման շրջանակներում անչափահասին աշխատանքի մեջ	Ընդունվել է	Ընդունվել է

			ներգրավելու համար, ինչը կրթության կազմակերպման այս ձևի առանձնահատկությունն է և կրթական վերջնարդյունքների ապահովման միակ ճանապարհը, մյուս կողմից՝ ապահովված լինեն անչափահասի առողջության, անվտանգության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր: Ըստ այդ, Աշխատանքային օրենսգրքում առաջարկված փոփոխությունները վերախմբագրվել են՝ հաշվի առնելով ՀՀ կոնվենցիոն պարտավորությունները ոլորտում, միջազգային լավագույն փորձը, ԵՄ կարգավորումներն ու անդամ երկրների օրենսդրությունը, ինչպես նաև խնդրո առարկա դրույթների վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպությունից ստացված կարծիքը: Ստորև նշված բոլոր փոփոխությունները մանրամասն քննարկվել և ամբողջությամբ համաձայնեցվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ՝ աշխատանքային մի շարք քննարկումների միջոցով: Ուստի հետագա շարադրանքում չի մատնանշվում փոփոխությունների համաձայնեցված բնույթը: Վերնագրում «լրացումներ և փոփոխություն» բառերը փոխարինել «փոփոխություններ և լրացումներ» բառերով: Համապատասխանեցվել է նորմատիվ իրավական ակտերի մշակման համար սահմանված կանոններին:		
		1-ին և 2-րդ հոդվածներ	**Հոդված 1.** 2004 թվականի նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 13-րդ հոդվածում «կամ պաշտոնում» բառերը փոխարինել «, պաշտոնում կամ համապատասխան կրթական ծրագրի որակավորման նկարագրով սահմանված» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
			Հոդված 2. Օրենսգրքի 17-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում «կամ պաշտոնի» բառերը փոխարինել «, պաշտոնի կամ համապատասխան կրթական ծրագրի որակավորման նկարագրի» բառերով,	Ընդունվել է	Ընդունվել է

			2) 2-րդ մասում «անձինք» բառից հետո լրացնել «, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն անցնող և աշխատանքային պայմանագրով սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողները» բառերը: Առաջարկը խմբագրական բնույթի է և նպատակ ունի ապահովել ՄԿՈ օրենքի նախագծի հետ հասկացությունների միատեսակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է
		3-րդ, 4-րդ (հին 5-րդ), 5-րդ (հին 6-րդ), 6-րդ (հին 7-րդ), 7-րդ (հին 8-րդ), 8-րդ (հին 9-րդ), 9-րդ (հին 10-րդ), 10-րդ (հին 10-րդ) հոդվածներ	**Հոդված 3. Օրենսգրքի 17.1-ին հոդվածում՝** 1) 5-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքը կազմակերպվում է սույն օրենսգրքի 148-րդ և 257-րդ հոդվածներով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:»: 2) 6-րդ մասը «միջոցառումներին մասնակցելու» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում աշխատանքային պայմանագրով սահմանված որոշակի աշխատանք կատարելու» բառերը: Նախագծի առաջարկվող փոփոխությունները լրամշակվել են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ աշխատանքին քննարկումների արդյունքներով՝ դրանք համահունչ դարձնելու համար Աշխատանքային օրենսգրքի մյուս դրույթներին: **Հանել 4-րդ հոդվածը** **Հոդված 4.** Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը «որակավորում չպահանջող» բառերից հետո լրացնել «կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության	Ընդունվել է	Ընդունվել է

			շրջանակում սահմանված» բառերը: Առաջարկը խմբագրական է: **Հոդված 5.** Օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունում «կազմակերպած մրցույթով» բառերից հետո լրացնել «, ուսումնական հաստատությունների սովորողների (շրջանավարտների) ռեսուրսներից» բառերը: Առաջարկը խմբագրական է:		
			Հոդված 6. Օրենսգրքի 89-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.3-րդ մաս. «1.3. Սույն օրենսգրքի 101.1.-ին հոդվածով նախատեսված պայմանագրի դեպքում սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի փոխարեն հիմք է ընդունվում համապատասխան մասնագիտական ուսումնական հաստատության և գործատուի միջև կնքված աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման վերաբերյալ համագործակցության պայմանագիրը:»:	Ընդունվել է	Ընդունվել է
			Առաջարկը պայմանավորված է ՄԿՈ-ների աշակերտներին աշխատանքի ներգրավելու հնարավորությունների ստեղծմամբ:	Ընդունվել է	Ընդունվել է
			Հոդված 7. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը «անձինք» բառից հետո լրացնել «կամ մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողները» բառերը: Առաջարկը խմբագրական է:	Ընդունվել է	Ընդունվել է
			Հոդված 8. Օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով. «4.1) մասնագիտական կրթության և ուսուցման		

			ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողների հետ.»: Առաջարկը խմբագրական է:		
			Հոդված 9. Օրենսգրքի 101-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունում «միջոցառումներին» բառից հետո լրացնել «կամ կատարել մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում աշխատանքային պայմանագրով սահմանված որոշակի աշխատանք»: Առաջարկը խմբագրական է:	Ընդունվել է	Ընդունվել է
			Հոդված 10. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 101.1-ին հոդվածով. «**Հոդված 101.1. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում աշխատանքային պայմանագիրը** 1. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողի (նրա օրինական ներկայացուցչի) հետ մասնագիտական կրթության և ուսուցման մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում կնքվում է աշխատանքային պայմանագիր:	Ընդունվել է	Ընդունվել է
			2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային պայմանագիրը կնքվում է այն ժամանակահատվածի համար, որը սահմանվել է գործնական աշխատանքային ուսուցման ծրագրի իրագործման համար:	Ընդունվել է	Ընդունվել է

			3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային պայմանագրով աշխատանքը վարձատրվում է փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան՝ համաձայն գործատուի սահմանած ժամանակացույցի (գրաֆիկի): 4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքային պայմանագրի գործողության ժամանակահատվածում սովորողը ներգրավվում է գործնական աշխատանքային ուսուցման ծրագրից բխող աշխատանքներում: 5.Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող սովորողի հետ աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները կարգավորվում են նաև մասնագիտական կրթության և ուսուցման մասին օրենսդրությամբ:»: Առաջարկների միջոցով հստակեցվել են ՄԿՈ-ների շրջանակներում աշկերտի հետ կնքվող աշխատանքային պայմանագրի էությունն ու բովանդակությունը՝ 2023 թվականին լրամշակված աշխատանքային օրենսգրքով նոր կարգավորվող աշակերտի և փորձնակի կարգավիճակները և կարգավիճակները տարբերակելու համատեքստում: **Հոդված 11**. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետ. «3.1.) մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սույն օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված աշխատանքներում ներգրավված մինչև տասնութ տարեկան անձանց համար՝ օրական մինչև չորս ժամ, սակայն շաբաթվա	Ընդունվել է	Ընդունվել է

		11-րդ հոդված 12-րդ հոդված	ընթացքում ոչ ավելի, քան քսան ժամ.»: Առաջարկի էությունը ՄԿՈՒ ոլորտում աշխատանքի ներգրաված անչափահասի աշխատանքային իրավունքների պաշտպանությունն է՝ աշխատանքի առավել նվազ տևողության սահմանման միջոցով: **Հոդված 12.** Օրենսգրքի 148-րդ հոդվածում՝ 1) 3-րդ մասում «տասնութ տարեկան անձանց,» բառերից հետո լրացնել «(բացառությամբ 3.1.-ին մասով սահմանված դեպքերի)» բառերը: 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1.-3.4-րդ մասեր. «3.1. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող տասնվեցից մինչև տասնութ տարեկան սովորողները բացառիկ դեպքերում կարող են ներգրավվել աշխատանքի գիշերային ժամանակ՝ սույն հոդվածի 3.2.-3.4.-րդ մասերի պահանջների պահպանմամբ, եթե աշխատանքը պայմանավորված է կրթական ծրագրի որակավորման առանձնահատկություններով, անխուսափելիորեն անհրաժեշտ է ուսումնառության վերջնարդյունքներն ապահովելու համար և արգելված չէ բժշկական եզրակացությամբ: Սույն մասով նշված դեպքերում աշխատանքը պետք է իրականացվի ոլորտում մասնագիտական բավարար գիտելիքներ և փորձ ունեցող չափահաս անձի (մասնագիտական ուսուցման հրահանգչի) հսկողության ներքո: 3.2. Սույն հոդվածի 3.1.-ին մասով նախատեսված գիշերային ժամանակ աշխատանքը չի թույլատրվում ժամը 24-ից մինչև 4-ը ընկած ժամանակահատվածում, բացառությամբ զինված ուժերում, ոստիկանությունում, առողջապահական կամ բժշկական կազմակերպություններում աշխատանքի, եթե աշխատանքն անխուսափելիորեն անհրաժեշտ է կրթական ծրագրի որակավորման վերջնարդյունքների	Ընդունվել է	Ընդունվել է

			ապահովման համար: 3.3. Սույն հոդվածի 3.1.-ին և 3.2.-րդ մասերով նախատեսված դեպքերում տասնվեցից մինչև տասնութ տարեկան աշխատողների համար ամենօրյա անընդմեջ հանգստի տևողությունը չի կարող պակաս լինել 14 ժամից: 3.4. Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրերով ուսումնառող տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձինք չեն կարող ներգրավվել աշխատանքի մասնագիտական ուսումնական հաստատությունում դասերին անմիջապես նախորդող օրը՝ ժամը 20:00-ից հետո, եթե դասերը սկսվում են ժամը 9:00-ից շուտ:»: Կարգավորումները միտված են ՄԿՈՒ առանձին ոլորտներում ուսանող անչափահասին վնասական կամ վտանգավոր համարվող աշխատանքներում ներգրավելու և նրանց անհրաժեշտ պաշտպանություն և երաշխիքներ տրամադրելուն՝ միջազգային լավագույն փորձի լույսի ներքո: **Հոդված 13.** Օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասում «մինչև 6-ը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 148-րդ հոդվածի 3.3-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը: Առաջարկը բխում է մյուս հոդվածներում առաջարկված փոփոխություններից: **Հոդված 14.** Օրենսգրքի 201.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 201.2. Աշխատողների մասնագիտական կատարելագործումը և զարգացումը** 1. Գործատուն աշխատողի համաձայնությամբ և գնահատված կարիքի հիման վրա կարող է իր մոտ կամ այլ վայրում (այդ թվում՝ օտարերկրյա պետությունում) կազմակերպել աշխատողի կարողությունների կատարելագործմանը, արդիականացմանը և նոր	Ընդունվել է	Ընդունվել է

		Հոդված 13-րդ Հոդված 14-րդ	հմտությունների ձեռքբերմանը միտված լրացուցիչ կրթական ծրագրեր: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում գործատուի և աշխատողի միջև կնքվում է գրավոր պայմանագիր: 3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում աշխատողի մասնակցության ժամանակահատվածում պահպանվում են նրա աշխատատեղը (պաշտոնը) և հիմնական աշխատավարձը (գործավարձով վարձատրվող աշխատողների դեպքում՝ միջին աշխատավարձը, բացառությամբ պարգևատրման գումարների), բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքի: 4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցությունն աշխատողի համար սույն օրենսգրքի 209-րդ հոդվածի իմաստով գործուղում չի համարվում: 5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում գործատուի մոտ աշխատելու պարտականությունն իր մեղքով չկատարելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցած անձը պարտավոր է գործատուին հատուցել ոչ ավելի, քան իր ուսուցումը կազմակերպելու հետ կապված փաստացի ծախսերը՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պայմանագրով սահմանված կարգով ու պայմաններով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
			Առաջարկը նպատակ ունի եզրութաբանական հստակություն ապահովել ՄԿՈ օրենքի նախագծով առաջարկվող եզրույթների հետ և գործող նորմի համեմատ բովանդակային փոփոխություններ չի նախատեսում: **Հոդված 15.** Օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.	Ընդունվել է	Ընդունվել է

		Հոդված 15, նոր 16 (հին 17)	«Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում սահմանված որոշակի աշխատանք կատարող սովորողների բժշկական զննությունը, այդ թվում՝ պարբերական բժշկական զննությունը կատարվում է ուսումնական հաստատության միջոցների հաշվին, եթե այլ բան սահմանված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով:»: **Հոդված 16.** Օրենսգրքի 257-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում «գովազդելուն ուղղված աշխատանքներում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը. 2) 2-րդ մասի 1-ին նախադասությունում «վնասակար համարվող աշխատանքներում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը. 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-6-րդ մասեր. «3. Տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձինք մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում կարող են ներգրավվել ալկոհոլային խմիչքների արտադրության մեջ, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված աշխատանքներում, եթե դա պայմանավորված է կրթական ծրագրի որակավորման առանձնահատկություններով և անխուսափելիորեն անհրաժեշտ է ուսումնառության վերջնարդյունքներն ապահովելու համար, ինչպես նաև պահպանված է վտանգավոր նյութերի արտանետումների օրենսդրությամբ նախատեսված սահմանային չափը: 4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում, գործատուն ապահովում է տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձանց առողջության, անվտանգության և բարոյականության պաշտպանության		

			համապատասխան պայմաններ և անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նախապես տրամադրում է տեղեկություններ հնարավոր ռիսկերի, անվտանգ աշխատանքային գործունեության վերաբերյալ, անցկացնում է ուսուցում և հրահանգավորում: Աշխատանքը պետք է իրականացվի ոլորտում մասնագիտական բավարար գիտելիքներ և փորձ ունեցող չափահաս անձի (մասնագիտական ուսուցման հրահանգչի) հսկողության ներքո: Գործատուն պետք է անչափահասին զերծ պահի ալկոհոլային խմիչքների սպառումից: 5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում, գործատուն մինչև տասնութ տարեկան անձանց օրինական ներկայացուցիչներին գրավոր տեղեկացնում է աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերի և մինչև տասնութ տարեկան անձանց անվտանգության ապահովման և առողջության պահպանման վերաբերյալ ձեռնարկված բոլոր միջոցների մասին: 6. Կառավարությունը սահմանում է մասնագիտական կրթության և ուսուցման ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում գործնական աշխատանքային ուսուցում անցնող և որոշակի աշխատանք կատարող տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձանց սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված աշխատանքներում ներգրավելու, նրանց առողջության, անվտանգության և բարոյականության պահպանման պայմանները:»: Կարգավորումները միտված են ՄԿՈՒ առանձին ոլորտներում ուսանող անչափահասին վնասական կամ վտանգավոր համարվող աշխատանքներում ներգրավելու և նրանց անհրաժեշտ պաշտպանություն և երաշխիքներ տրամադրելուն՝ միջազգային լավագույն փորձի լույսի ներքո: Առաջարկվում է խմբագրել նոր բովանդակությամբ, նպատակ ունենալով հստակեցնել դեպքերը և թե ինչ պայմանների դեպքում կարող է տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձինք մասնագիտական	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է

		Հոդված նոր 17 (հին 18)	կրթական ծրագրով աշխատանքի վրա հիմնված ուսումնառության շրջանակում ներգրավվել ալկոհոլային խմիչքների արտադրության մեջ: Վերախմբագրել եզրափակիչ և անցումային դրույթները հաշվի առնելով Նախագծում առաջարկված վերոնշյալ փոփոխությունները. **«Հոդված 17. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 16-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ վեցամսյա ժամկետում:»		

				Ընդունվել է	Ընդունվել է
«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
126.	Կառավարություն	Վերնագիր	Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից հետո լրացնել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերը հաշվի առնելով նախագծի բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է

127.	Կառավարություն	1-ին հոդված	«ՀՕ-248 օրենքի» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
128.	Կառավարություն	5-րդ և 6-րդ հոդվածներ	Հոդվածների համարակալումը շտկել	Ընդունվել է	Ընդունվել է
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
129.	Կառավարություն	Վերնագիր	Նախագծի վերնագրից հանել «ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
130.	Կառավարություն	1-ին հոդված	1-ին կետի «8.5.1.2. արհեստավորի» բառերից հետո լրացնել «կամ կրտսեր մասնագետի» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
131.	Կառավարություն	2-րդ հոդված	Հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:»:	Ընդունվել է	Ընդունվել է
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
132.	Կառավարություն	1-ին հոդված	1. «ՀՕ-193 օրենքի» բառերից հետո հանել «(այսուհետ՝ Օրենք) բառերը 2. «5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերի փոխարեն լրացնել «լրացնել 5.1-րդ և 6.1-րդ կետեր և 5-րդ և 6-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.» բառերը: Վերոգրյալ շտկումները պայմանավորված են հստակեցնելու համարակալումները	Ընդունվել է	Ընդունվել է
		1-ին հոդված	5.1-րդ կետում՝ «արհեստավորի» բառերից հետո լրացնել «կամ կրտսեր մասնագետի» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

133.	Կառավարություն	2-րդ հոդված	Վերանայել անցումային դրույթները՝ ապահովելու համար նախագծի անցնցում կենսագործման հնարավորությունը՝ «1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար տրված այն լիցենզիաները, որոնց համար սույն օրենքով առաջանում են նոր պայմաններ և պահանջներ, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6-ամսյա ժամկետում ենթակա են վերաձևակերպման մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական հիմնական կրթական ծրագրի և արհեստավորի (կամ կրտսեր մասնագետի) որակավորման ծրագրի, մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի ու մասնագետի որակավորման ծրագրի իրականացման համար, բացառությամբ այն ուսումնական հաստատությունների, որոնց համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված են այլ ժամկետներ: 2. Սույն օրենքով առաջացող նոր պահանջներին ու պայմաններին պետական և հանրային մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ապահովվում է Կառավարությունը՝ Վարչապետի կողմից սահմանած ժամանակացույցով: 3. Սույն հոդվածի 1-ին մասով նշված ժամկետում լիցենզիաների վերաձևակերպման դեպքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում:	Ընդունվել է	Ընդունվել է

134.	Կառավարություն	2-րդ (լրամշակված 3-րդ) հոդված	Հետաձգել Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը՝ կենսագործման անցնցում ընթացքը ապահովելու համար «**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025թ. հուլիսի 1-ից:»	Ընդունվել է	Ընդունվել է